



ԿՐՕՆԱ-ԵԿԵՂ ԵՑԱԿԱՆ ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

Ա. ՏԱՐԻ

ՅԻ ՅՈՒՆՈՒԱՐ 1910

ԹԻԻ 6

ԽՐԱՍԳՐԱՊԵՏ
ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Վ. Ա. ՐԻԶ
ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԻ Է ԲԱՐԵԿԱՐԳԵԼ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ
ՄԵՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՆՈՆԵՐԸ
ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ ԱՆՏԱՐԲԵ-
ՐՈՒԹԻՒՆԸ ԿՐՕՆՔԻ ՄԷՋ
ԴԷՊ Ի ՏԱՃԱՐԸ
ԱԻԵՏԱՐԱՆԻ ՄԵԿԵՆՈՒԹԻՒՆԸ
ՀԵԼԼԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՐԵՒԵԼՔԻ ԵՒ ԱՐԵՒՄՈՒՏՔԻ ՀՈԳԻՆ
Ս. ԳՐՈՑ ԲՆԱՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅ ԵՐԱՅՆՈՒԹԵԱՆ ՊԱՄՏՈՒԹԻՒՆԸ
ՇԱՐԱԿԱՆԻ ԽԱՉԵՐ
Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ ԿԱՄ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ԹԱ-
ԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՈՒՄԸ

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԳԱՊԵՏ
Ե. Ե. Դ.

ՋԱՐՄԱՅԻ ԲԱՀԱՆԱՅ

ԳՈՒՍԱՆ

ՄԵԿԵՆԻԶ

ԹՐԳՄ. ՊԱՐԳԵՒ ՎԱՐԳԱՊԵՏ

ԹՐԳՄ. ՀՐԱՆՑ ՍԱՄՈՒԷԼ

ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԲՀՆՑ. ՀԻՍԱՐԼԵԱՆ

ԱՐԱՀԱՄ ԲՀՆՑ. ԷՊԵՆԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԳԱՊԵՏ

Գին 50 փարայ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՕՍՄ. ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Պապը Ալի հասէսի Սէփէթիլէր փողոց Թիւ 27

Փառաւնքէ ինքնաբերաբար զիմումներ կը հասնին Վարչութեանս՝ կրօնաթերթիս բաժանորդադրուելու խնդրանք։

Ի պատասխան այս խնդրանքներու կը յայտարարենք թէ՛ այսպիսիներու և թէ՛ ուրիշ բաժանորդ ըլլալ փափաքողներու թէ՛ կրնան զիմել իրենց պատկանած Առաջնորդարաններու կամ Թաղ, Խորհուրդներու և կամ յատկապէս նշանակուած գործակալներու և անոնց միջոցաւ իրենց զիմումը ներկայացնել և ստանալ թերթերը։

Ի զիւրութիւն կը ծանուցանենք ի ստորեւ անունները այն առաջնորդներուն և գործակալներուն, որոնց գործակցութիւնը խնդրած ենք թերթիս ի նպաստ։

ՅՈՒՑԱԿ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆՑ

՝ՏԱՃԱՐ,, ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

Աղբիւնուպոլիս
Աղեփանդիս
Ամերիկա
Այնթապ
Ասաբազար
Արմաւ
Բեդեսապուրկ
Գաղաւթիս
Գօնիս
Եգիպտոս
Եդեսիս
Եօզլաս
Երզնկա
Եւդոկիս
Զմիւռնիս
Էսկիեհէիւր
Խարբերդ
Կարիճ
Կեսարիս
Կիւստուն
Հալեպ
Մանչեսթր
Մարաշ
Մարզուան

Առաջն. Տեղապահ Տ. Մատթէոս Վրդպ. Իրնէեան
Միհրան էֆ. Թէլեան
Առաջ. Փոխանորդ Տ. Պօղոս Վրդպ. Գաֆթանեան
Տ. Գարեգին Քհնյ. Պօղարեան
Գրիգոր էֆ. Ակօնայեան
Փոխ-Վանահայր Տ. Մեսրոպ Ծ. Վրդպ. Նարոյեան
Տ. Խաչատուր Ա. քհնյ. Տօնէլեան
Առաջնորդ Տ. Բարդէս Ծ. Վրդպ. Կիւլէսէրեան
Տ. Յովնանէս Քհնյ. Գուլումճեան
Առաջնորդ Տ. Մկրտիչ Ծ. Վրդպ. Աղաւնունի
Ք. Թիւրաքեան էֆ.
Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդպ. Դիմաքսեան
« Տ. Երուանդ Վրդպ. Փէրտանճեան
Առաջն. Տեղապահ Տ. Արտաւազդ Վրդպ. Գալէնտէրեան
« Փոխանորդ Տ. Յովնանէս Ա. Քհնյ. Մինասեան
Տ. Գալուստ քհնյ. Տ. Գալուստեան
« Տեղապահ Տ. Գէորգ Ծ. Վրդպ. Աւանեան
Առաջնորդ Տ. Սմբատ Ծ. Վրդպ. Սաատէթեան
« Տ. Տրդատ Ս. Եպիսկ. Պալեան
Մաթոս էֆ. Թոքատիւն
Առաջն. Տեղապահ Տ. Շահէ Վրդպ. Գառպարեան
Առաջնորդ Տ. Գէորգ Ս. Եպիսկ. Իւթիւճեան
Տ. Հմայեակ Քհնյ. Վարժապետեան
Յակոբ էֆ. Սրապեան



ԿՐՕՆԱ-ԵԿԵՂ ԵՑԱԿԱՆ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ

Ա. ՏԱՐԻ

31 ՅՈՒՆՈՒԱՐ 1910

ԹԻԻ 6

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԲԱՐԵԿԱՐԳԵԼ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

ՂԱՆԻՔԵՐԸ

Ամէն սերմ իր մէջ կը բովանդակէ իր տեսակը արտադրող սկիզբը կամ զօրութիւնը. հետեւաբար տեսակները չեն փոփոխուիր՝ այլ կը վատասն-րին կամ կը բարեփոխուին: Ասի գիտական վարդապետութիւն մ'է՝ հիմնուած ընդհանուր փորձառութեան մը վրայ:

Բարայտական կարուածին մէջ մանաւանդ բոլորովին ճիշտ է այս տեսութիւնը՝ բնա-հոգեբանական երևուոյթներով բացատրուած: Թողունք անատուններն ու բոյսերը, մարդերու մէջ մասնաւորապէս այլասերումը բնական և բարեփոխումը արուեստական գործ են: Ուր արտաքին

զրդուամ կամ թելադրութիւն և ներքին շարժում չիկայ՝ հոն յեամադիմութիւնը անխուսափելի է, և հակադարձաբար: Արուեստական ալ սակայն շատերու ըմբռնումին համաձայն արհամարհելի չէ, վասն զի ան ալ իր մէջ կը ծածկէ բնականին ազդումն ու նեշնչումը. բնութիւնն է որ անոր միջոցով կը յատնուի, կ'ընդլայնուի, կը զարգանայ ու կը կատարելագործուի:

Մարդկային ամէն կալմականութիւն հնազանդ է տիեզերական այս օրէնքին. ուր բնութեան և արուեստի գործակցութիւնը կը պակսի՝ հոն կեանք, շարժում և յառաջդիմութիւն չկրնար ըլլալ:

Եկեղեցին ալ մարդկային կազմակերպութիւն մ' է, աստուածային հիմնադրութիւնով մը նուիրագործուած: Իբր այս՝ ան ունի իր մեքենական յօրինուածութիւնը՝ պատշաճ գոհացնելու ժողովրդական այս կամ այն զանգուածի կրօնական, բարոյական և ընկերական պէտքերը. բաց ի իր վերացական և զուտ բարոյական ըմբռնումէն, ուր հաւատացեալներու ազատ և ինքնագիտակից հոգիները իրարու կը զօտուին Յիսուսի՝ հաւատքովն ու սիրովը և անդէնականի քրիստոնէական երազանքներովը:

Բայց եկեղեցիի մեքենական կազմութիւնն ալ ոչ նուազ համապատասխան է կամ պէտք է ըլլայ զայն կազմող ժողովուրդին հոգեբանական տրամադրութիւններուն: Մենք չենք խօսիր բոլոր այն եկեղեցիներու մասին, ուր արուեստը դադրած է ի յարգանս բնութեան, կամ աւելի ճիշտ՝ բազմաբարդ առաւելագոյն մը՝ եղծած է իրերու իրական պատկերները, նիւթականացնելով կրօնքն ու անոր յարակից գործառնութիւնները: Հոն ժողովուրդը կ'ապրի իբրեւ ստրուկ և անգիտակից դասակարգ մը՝ բռնաւոր և իշխող դասակարգի մը հանդէպ՝ որ գիտէ շահագործել մոլեռանդութիւններն ու նախապաշարումները: Վկայ վերջին տխուր երեւոյթները կաթոլիկ հասարակութեան մէջ մանաւանդ՝ ուր սակայն ուրախ ենք տեսնելով որ ժողովուրդը տալաւ կը գիտակցի իր իրաւունքներուն, Ս. հոգաթափ համբուրելու բարեպաշտական պարտականութիւնը անշատելով օրէնքը յարգելու նուիրական պահանջումէն:

Մենք դարձնենք մեր ակնարկը մեր եկեղեցիին վրայ:

Ստոյգ է թէ — և այս՝ պատմութեան անխարդախ վկայութիւնովը — հայ եկեղեցին ժողովրդական եկեղեցի մ'է՝ թէ՛ իր վարչական կազմովը և թէ՛ իր բոլորական նկարագիրովը: Բայց դարերու ընթացքին մէջ չնորհիւ օտար ապականիչ ազդեցութիւններու՝ իր ռամկավարական հանգամանքը վերածուած է տեսակ մը ազնուապետական դրութեան: Աւետարանը մենաշնորհը եղած է կարծես լոկ հոգեորական դասակարգին, որ՝ ընդհանուր առումով՝ ըստ կամս և սխալ կը մեկնէ զայն, անգէճ՝ բառին բուն նշանակութիւնով՝ անոր թաքուն և վսեմ իմաստին՝ ուր դարերու հոգին կայ թխած: Եկեղեցական ծէսերն ու արարողութիւնները, որոնցմով սնան ու ներշնչուեցան մեր պապերն ու մեր հայրերը, այսօր կորսնցուցած իրենց դաստիարակիչ բարոյական մեծ դերը, կորսնցուցած իրենց իսկական նշանակութիւնը, կը դառնան սոսկ միջոցներ հոգեորականներու մեծամասնութեան ապրուստը մատակարարելու: Օհ, ճիշդն շատ է թիւը անոնց՝ որոնք հոգեոր սեղանին սպասարկութեան նուիրուած պաշտօնեաներ՝ անիրաւ մամոնան կ'երազեն իրենց բոլոր բարեպաշտական ձեւակերպութիւններու խղճամիտ կիրարկութեան մէջ: Եւ ասոնք են որ կը զայրանան և ջղաթունդ կ'ելլեն երբ եկեղեցիի բարեկարգութեան խօսք կ'ըլլայ, զուհիկ երեմիականներով հառարակութեան միտքն ալ պղղութեամբ և արդարացի յարձակումներու տեղի ստարով: Չիկայ բան մը կարծես

եկեղեցիի այդ արտաքին կեանքին մէջ, որ խօսի հոգեւորականին կամ հաւատացեալին սիրտին, կամ աւելի ճիշտ, չիկայ եկեղեցականին և ժողովուրդին մէջ այն հոգին՝ որ կարենայ ըմբռնել ու գնահատել անոնց պատմական, բարոյական և հոգեբանական արժէքը. եթէ ոչ անոնք այսօր ուրիշ կերպ պիտի խորհէին ապահովաբար իրենց եկեղեցիին, անոր կեանքին, անոր անցեալին, ներկային և ապառնիին, անոր այսօրուան և վաղուան պէտքերու մասին:

Քահանայական դասակարգի վրայ խօսուած ժամանակ շատեր շատ պատճառներ մէջ կը բերեն՝ անոր ներկայ ինկած վիճակը լուսաբանող. ոմանք նիւթական վարձատրութեան յոռի դրութիւնը, ոմանք ազնուապետական դասակարգի մը իշխանական քմահաճոյքը, ուրիշներ ժողովուրդին անտարբերութիւնը, են. են. Մենք այսպէս չենք խորհիր: Ընդունելով մէկտեղ թէ տնտեսական մտահոգութիւնը մէկն է այն գլխաւոր պատճառներէն՝ որոնք հոգեւորականը զեղծումի կ'առաջնորդեն, կ'ստորնացնեն և վարկաբեկ կ'ընեն, մենք կը գըտնենք ուրիշ էական պատճառ մը. քերի եւ *sursaut* դասիստականութիւն մը եւ Աւեստանի ոգիին ըմբռնումի բացարձակ պակասը՝ արդիւնք մտադրական աւանդութիւններու խճորումներու եւ աստուծային հեղինակաւորումով մը *sprauyest* ելում:

Բացատրենք.

Աւետարանի հիմը ընկերա-բարոյական կեանքն է բացարձակապէս, դարերու ոգիին համապատասխան զարգացումով մը պայմանադրուած:

Ընկերականութիւնն ինքնին շատ պարզ և շատ բարդ իմաստ մ'ունի իւր մէջ: Պարզ է անոր համար որ կը նշանակէ խումբ մը անհատներու, համայնքի մը կամ համայնքներու ընկերակցաբար, միասին ապրելը. բարդ է անոր համար որ խմբակցական այդ կեանքը իր հետ կը բերէ կարգ մը կենսական և հրամայական պայմաններ: Համերաշխ գործակցութիւն և և հաւասար վարձատրութիւն, աշխատութեան որակի և քանակի արդար համեմատութիւնով միայն աստիճանաւորուած. այս է առաջին պայմանը: Կա՞յ այսօր մեր մէջ այս սկզբունքի կիրարկութիւնը: Բաւական է միայն աչքի առջև բերել ժողովրդային այն տուրքերը, կամ նուէրները, ինչպէս սովոր ենք ըսել շատ սխալ ըմբռնումով մը, որոնք կը յատկացուին եկեղեցիի տնտեսութեան և անոր յարակից՝ Դպրոցի կրթ. մատակարարութեան: Դաւաններու մէջ մասնաւորապէս ցաւով կը տեսնուի թէ աղայական դասակարգը իր արդոց կրթութիւնը ձեռք կը բերէ չընորհիւ աղքատիկ ծնողաց զաւակներու համետ ամաթոշակներու՝ որոնք սակայն համեմատական չեն իրենց կարողութեան, նկատի առնելով այն անարդար բաշխումը՝ որուն համեմատ պարզ բանուորի մը և հարուստ գրամատէրի մը վճարումները հաւասարութեան սկզբունքի չգոյութիւնը կը մատնեն: Եկեղեցիի պնակներու և գանձանակներու արդիւնաբերումը ճիշտ միևնոյն ապօրինութիւններով և զեղծումներով կը կատարուի: Այս տխուր ելուրջ ուշադրութեան արժանի երևոյթ միայն գաւառներու մէջ

չէ որ կը տեսնուի, այլ նաև Պոլսոյ մէջ: Այս է պատճառը որ մեր կըրթական դործերը միշտ ու միշտ կը կազան: Վկայ նոյն իսկ Պոլսոյ մեր թաղային վարժարանները, որոնց բարեկարգութիւնը հիմնական ու անհրաժեշտ պահանջք է՝ Եկեղեցիին ալ բարենորոգութեան պէտքը ճանչնալու և անոր գոհացումի մեջոցներու գործադրութիւնը հնարաւորելու համար: Եկեղեցին կազմողը Դպրոցն է, սերունդներու այդ ամենանուիրական մարզարանը, և ո՛չ թէ հակադարձաբար: Դպրոցը Եկեղեցիին սերմն է: Եթէ ինկած է Եկեղեցին, եթէ չեղած է իր ուղղութիւնէն, եթէ յետագիմած է, պատճառը փնտռեցէք Դպրոցին մէջ: Եթէ Եկեղեցիին պաշտօնեան այսօր չգտնուիր իր կոչումի բարձրութեան վրայ, եթէ այն կոյր առաջնորդ մ' է՝ լոյսի գիտակից թէ անգիտակից թշնամի, պատճառը դարձեալ Դպրոցն է: Եկեղեցին ներկայացնողը հոգեւորականը չէ միայն, այլ մանաւանդ ժողովուրդը՝ որուն պաշտօնեան, սպասարկողն է Եկեղեցականը: Եկեղեցիին և Եկեղեցականութեան բարձրացումը հետեւաբար կախում ունին ժողովուրդի զարգացումէն, ճշմարիտ յառաջդիմութիւնէն՝ որ Դպրոցով միայն կրնայ կատարուիլ: Իսկ մենք ընդհակառակը գործնական, իրական ո՛չ մէկ աշխատութիւն կուտանք մեր կրթական յարկերու բարոյական վարկն ու մակարդակը բարձրացնելու, տալով անոնց նոր և նպատակայարմար կազմակերպութիւն, վարչական և մշակական (= կոլտրական) ողջամիտ և արդիւնաբար ուղղութիւն:

Երբ կը խօսինք հոգեւորականութեան բարձրացումին վրայ՝ մենք մեր աչքին առջև չենք առներ ներկայ Եկեղեցականութիւնը՝ որուն համար ալ եղածը եղած է: Եկեղեցական կոչումը չբարձրացնելը ինկածը՝ եթէ անոր մէջ կանխաւ այդ կոչումին ձայնին գիտակցութեան և համոզումի խորէն պատասխանող արժանիքի չնորհն ու ներշնչումը չիկայ: Ներկայ հոգեւորականութիւնը՝ մեծամասնութիւնով՝ ինկածութեան խմորով թրծուած է: Յուսի ունակութիւնները, որոնցմով սրբապղծած է ան այդ նուիրական և իսկապէս ընկերա-ընտանեկան կեանքի ազնուացումին համար կարեւոր պաշտօնը, կարելի չէ արմատախիլ ընել անոր մէջ: Բայց ինչպէս ընտելութիւնը՝ այսպէս նաև ունակութիւնները յաճախ ժառանգական կ'ըլլան: Մեր բոլորանուէր ջանքն ու գործը պէտք է ըլլան արգիլել այդ անցումը կամ փոխանցումը, ամէնէն զորեղ դարմանումներով, խղճամիտ ընտելութիւնով մը և լուրջ ու խոստմընալից ձեռնարկներով:

* *

Հին ատեն մեր վանքերը ուսումի ու գիտութեան վառարաններ էին եղած: Վկայ մեր մատենադրական պատմութիւնը: Վանական—գրական այդ մշակութիւնը զուտ կրօնական չէր, ինչպէս ոմանք կը կարծեն անիրաւաբար, այլ ո՛րքան կը ներէին երկրին ներքին ու արտաքին ոչ-քաջալերական պայմանները՝ ժամանակին բոլոր ուսումներովը առաւել կամ նուազ չափով պէսպիսութեամբ: Մեսրոպ, Դաւիթ Անյաղթ, Մովսէս Խորենացի, Յովհան Երզնկացի, Ներսէս Շնորհալի, Մխիթար Գօշ ևն. ևն. բոլորն ալ վանականներ էին: Դր. Մագիստրոս իսկ

վանական կեանքին և կրթութեան չէ՞ր պարտէր արդեօք իր իմացական՝ Բիւզանդիոնէն իսկ գնահատուած մշակութիւնը։ Եթէ սակայն միւս կողմէ գրական ամէն վաստակ կրօնական դրոշմ մ'ունէր իր վրայ՝ պատճառը դարուն ոգին էր՝ զոր ո՛չ մէկ ողջ ջամիա քննադատ պիտի յաւակնէր դատապարտել։ Ժամանակն ու միջավայրը կը ձեւակերպէն միտքը, տալով անոր որոշ միտումներ ու տրամադրութիւններ։ Ամէն դար ինքն իր քննադատն է։—

Մինչև ԺԸ-րդ դար հայկ. ամբողջ մատենագրութեան, Հայ ժողովուրդի մտաւոր զարգացումի աղբիւրը եղող այդ վանքերէն շատերը այսօր լոկ իրենց աւերակներովը կամ անուններովը կը խօսին մեզի. իսկ մնացածները, անո՞նք ինչ կ'ընեն։ Պատասխանը շատ ցաւալի և ոչ-մխիթարական է։ Ահա էջմիածին մը, ահա Սիս մը, Աղթամար մը, Երուսաղէմ մը, Արմաշ մը, Ժամանակակից գլխաւոր և նշանաւոր վանքերը, որոնց իւրաքանչիւրի մասին չեմ գիտեր հարկ կա՞յ առանձին խօսիլ, երբ անոնք հանրածանօթ են այսօր իրենց զանազան ողբալի պատուէրներովն ու կացութիւնովը։

Էջմիածինը, իր հնութիւնովն ու նուիրականութիւնովը պատկառելի, կրօնական լուսաւորութեան այդ կեդրոնը, ուր հայ ժողովրդապետը — և ոչ թէ միայն քահանայապետ — կը բազմի ամբողջ հայութեան կամօքով և հաւանութիւնով, քանի մը տարիներ առաջ գրչի վաստակներու զգուելի խարոյկահանդէսներ կը սարքէր, միտքի բերտ բռնաբարութեան մը վատիկանը պատրաստելու համար կարծես հոն։ Թէև կը յուսանք որ արդի

Վեհ. Հայրապետը այդ արատը սրբելու համար ոչ մէկ ջանք պիտի չինայէ ձեմարանը բաղձացուած վիճակի մը վերածելու և լուսաւորութեան հոգին վերածնելու հոն։

Սիսը, բուերու ապաստանարան այդ աւերակոյտը իսկապէս, ուր պահ մը սաւառնիլ փորձեց արդի հայրապետի շինարար և կրթասէր ոգին, բայց, աւա՜ղ, անմոռանալի աղէտը հարկադրեց զինքը թափառելու նո՞ր աւերակներու, նո՞ր փլատակներու մէջ, ուր հացի կրծող սովը կը յաշորդէ կրթութեան վայրենացնող սովին։ Երանի՜ թէ Սիսն ալ բաժին ունենայ այն բարեացակամ խոստումներէն՝ որոնցմով հայը վարժուած է ապրիլ միշտ լաւագոյն ապագայի մը ակնկալութիւնով...։

Բայց միաբանական վերածնութիւն մը հոն ալ անհրաժեշտ է։ Ծոյլ վանականութեան մը դարաշրջանը անցած է հիմակ։ Ուր գրիչի, գիրքի, գործի կեանք չիկայ՝ հոն կը նշանակէ թէ մարդ, արժանիք չիկայ։

Աղթամարը, Վասպուրականի այդ չքնաղ կղզին, շատ կանուխէն արդէն դադրած էր իր կոշումին ծառայելէ։ Սկիզբէն մինչև այսօր ի՞նչ եղած է արդիւնքը այն բոլոր հասոյթներուն՝ որոնց իմաստուն շահագործումովն ու մատակարարութիւնովը չենք կարծեր թէ գաւառին կրթական պէտքերուն սատարելու ընդունակ բարձրագոյն դպրոց մը կամ ձեմարան մը կարելի չլլայ հիմնել հոն։

Իսկ Երուսաղէմը, ա՛հ, անոր սև ու ամօթալի պատկերը որո՞ւ ծանօթ չէ։ Քրիստոսի դերեզմանին շուրջը կատարուած ահուելի սրբապղծու-

թիւնները, աղտոտ կռիւները: Աւազակներու այս այրը ստուգիւ Քրիստոսի խարազանին պէտք ունի՝ մաքրուելու և սրբուելու համար: Ինչո՞ւ երուսաղէմն իր նոյն իսկ Համալսարան-ձեմարանը չունենայ, երբ ո՛չ միջոց կը պակսի և ո՛չ ալ միջավայրի յարմարութիւն: Եթէ երուսաղէմականներու (հոգեւորականներու) կոչումն է լոկ ազգային նուիրական,՝ իրաւունքներու պահպանութիւնը ի գին եղբայրադաւ շահագործութիւններու և նոյն իսկ ամօթապարտ արիւնահեղութիւններու, ըմբոստութիւններու և անկարգապահութիւններու Խաղաղութեան մեծ Խաղաղորի այդ մայրաքաղաքին մէջ, ինչո՞ւ ծաղրել Կաղափարը անոնց՝ որոնք միանգամ ընդ միշտ մէջտեղէն վերցնել կ'առաջարկեն այդ «գայթակղութեան քարը»: Քրիստոսի գերեզմանը կը պաշտպանեն գերեզմանացած այդ հոգիները՝ որոնց համար կրօնքը «կթուող կով» մ' է, շահագործելի միջոց մը: Եւ յետոյ կը գանգատինք թէ կրօնքը կ'անպատուի: Կրօնքը, յաւիտենական այդ ճշմարտութիւնը, կրանիտեայ այդ քարը մարդկութեան բարոյական, իմացական և բնկերական կեանքին, զոր ո՛չ յառիտեսութիւնը, ո՛չ սկեպտականութիւնը և ո՛չ որ և է հակավարդապետութիւն պիտի կրնար խախտել, կրնայ վտանգուել սակայն սրբապղծութիւններով և փարիսեցիական մոլորութիւններով: Խարազան մը, կը կրկնենք, երուսաղէմի վարչական հին դրութեան և բարոյական-իմացական աղտոտ կեանքին, և նոր ծրագիրով Դպրավանք մը՝ որ անոր վերականգնումը և տեական բարեկարգութիւնը երաշխաւորէ:

Արմաշի Դպրեվանքը այսօր և նախորդ «հոգին» եղող Դուրեան Սրբազանի մեկնումէն ի վեր երերուն և անստոյգ վիճակի մը մէջ է և ո՛չ ոք մտահոգ կ'երևի: Մեզի չիյնար գնահատել այն երկու ջրձանները՝ զորս Դպրեվանքը բոլորեց երկու ծանօթ վանահայրերու անձնուէր ջանքերու շնորհիւ: Դպրեվանք կոչուած է նոյն օգտակար գերը շարունակելու, աւելի բարեփոխուած ծրագիրներով նոյն իսկ, եթէ Ազգը գիտնայ լիովին անանխանձաբար կատարել իրեն բաժին ինկած պարտականութիւնը տաճկահայոց այդ նուիրական հաստատութեան հանգէպ, ուր ո՛չ հեռ կայ, ո՛չ ըմբոստութիւն, ո՛չ ծուլութիւն, ո՛չ անձնական շահագործութիւններ և ո՛չ ալ սակայն իր գոյութիւնը յարատե հիմերու վրայ դնող և իր բարոյական զոհողութիւնները հնարաւորող ուարդիւնաւորող... ԴԲԱՄԸ: Չա՞րժեր որ «Անատոլուի Օսմ. երկաթուղոյ Հայ պաշտօնէից Ազգօգուտ Միութեան» ասին քեռնարկին ուրիշ հետեւողներ ալ գտնուին, փոխանակ անոր կորովը անուղղակի յլատելու և զիրենք առաջադրուած նպատակէն շեղեցնելու փորձեր ընելու: Եթէ կը փափաքինք ունենալ իսէալ հոգեւորականութիւն մը, ինչպէս նաև գաւառներու համար լուրջ զարգացումով մշակուած ուսուցչութիւն մը, պէտք է քաջալերել Դպրեվանքը: Անոր արդի փվանահայրը, Գեր. Տ. Մեսրոպ Ծ. Վ. Նորայեան (Հարմակ), ծանօթ իր կարողութիւնովը, պարկեշտութիւնովն ու անձնութիւնովը, կ'սպասէ ու միշտ կ'սպասէ: Կը յուսանք թէ Խրնամակալութեան հոգատար ջանքե-

քերու՜ն չնորհիւ ի Ազգին դրական համակրական վերաբերումներով, և մանաւանդ Պատրիարքական Աթոռին վրայ փոխադրուած «Դպրեւանքի Հոգի»ին ներշնչումովն ու թելադրութիւններովը Դպրաւանքը պիտի վերստանայ իր նախկին կորովն ու փայլը, քաջաբերով Վերատեսուչ վարդապետն ու իր գործակիցները կրկնապատկերու և հիմնաւորելու իրենց եռանդն ու զործունէութիւնը:

Եթէ մեր այս խոնարհ թելադրութիւններուն համաձայն վանքերը վերականգնին, դառնալով գիտութեան և լոյսի վառարաններ, դարուս

ողին համապատասխան ուժգնութիւնով մը և ջերմութիւնով մը, եթէ մեր ապագայի հոգեւորականութեան նոր սերմերը ցանուին հոն, սաղմնաւորուին ու բեղմնաւորուին, եթէ՝ կ'ըսենք՝ ուղղափառ և ողջամիտ կրթութեան մ'ու դաստիարակութեան մը արուեստը իմաստուն և նպատակայարմար մեթոտով մը ձեւակերպէ հոն բնութեան պատրաստած խմորը, — ահա այն ատեն միայն կը կատարուի բարեշրջումը, այն ատեն միայն կը բարեկարգուի Հայ Եկեղեցին:

ԳԱՐԵԳԻՆ ԱՆՐԴԱՊԵՏ

ԵԿԵՂԵՑԱ-ԻՐԱԻԱԳԻՏԱԿԱՆ

ԿԱՆՈՆՔ ԺՈՂՈՒԹՅՆ ԱՆԿԻՒԻԹՈՅ Յամբն 314

1. — Երեցունք որք ի բռնութենէ հեթանոսաց՝ ո՛չ ասնջանա ի վերայ ածեալ և ո՛չ մահ սպառնացեալ՝ առ երիւզի զոհեցին, և ապա ստըջացան ո՛չ կեղծեօք այլ ճշմարտութեամբ, վասն այսպիսեաց կա՛մ եղեւ զի զաթուոյն կարգ կալցին, բայց պատարագ մատուցանել, ի թարգմանութիւնս նստիլ կամ Առեւտրան կարգալ (*): կամ յայլ պաշտամունս սրբութեան մատչիլ ո՛չ ունիցին:

2. — Նոյն կանոն և սարկաւազաց կայցէ, եթէ զոհեցին և ապա զղջացան, կացցին ի կարգի պաշտաման, այլ դադարեացցին յամենայն պաշտամանէ սրբութեան ի վերաբերելոյ զհաց և զբաժակ կամ ի քարովելոյ: Բայց եթէ եպիսկոպոսն զգարձ նոցա և զխոնարհութիւն քաղցրութեանն ոչ անստե արարեալ կամ իցի տալ կամ բառնալ ինչ ի նոցանէ՝ ի խնայ լիցի:

(*) Հայ կանոնագրին բացատրական մէկ յաւելումը:

3. — Փախչողքն ի հալածանաց՝ որ ըմբռնին կամ յնոտանեաց իւրեանց մատնին կամ ալլով իւրք եղանակաւ, և գոաւին ստացուածք նոցա և կամ ընդ տանջանօք կամ ի կապանս արկանիցին, և յաղաղակէն իւրեանց եթէ՝ «Բրիստոնեայք եմք»՝ բռնադատեցին, այսինքն է բռնութեամբ դիցին (հալածիչք) ի ձեռս խոշտանգելոցն (զխուռնի), կամ զմիս զոհեալ ի հարկէ տուցին ուտել նոցա, և նոքա խոստովանեցին սակայն թէ Քրիստոնեայք իցին, և ապա սգասցին սրտիւք ընդ պատահարն արտասուօք և հառաչմամբ և խոնարհութեամբ վարուց, այնպիսիքն՝ իբրեւ ո՛չ մեղուցեալք՝ մի՛ զրկեցցին ի հաղորդութեանէ, իսկ եթէ զրկեցան ի ձեռն եպիսկոպոսի, վասն առաւել խստութեանն նորա կամ վասն անգիտութեանն, ընկալեալ լիցին անդրէն: Այսպէս եղիցի՝ եթէ յուխաէ իցէ ոք կամ ի ժողովրդականաց քննեացի և այն՝ զի իցէ՞ հնար աշխարհականացն, որք ի նմին հարկի կային՝ մատչիլ ի կարգ և յայտ եղեալ թէ ոչ ինչ մեղուցեալ են՝ մանաւանդ եթէ յառաջա-

գոյն զուգիւ վարս յանձինս ցուցեալ ի-
ցին՝ ձեռնադրեցին :

4. — Որք ի բռնութենէ վարեցան ի
զոհել՝ և յաւելին ևս ուտել ի մեհեանս
կռոցն, կամ յետ բռնադատութեանն՝ զը-
ւարթ երեսօք ևւ ճոխագոյն հանդերձս
արկեալ զանցամբ չոքան անդր և հաղորդ
գտան հանդերձելոյ ճաշուն՝ առանց իրիք
ինդրելոյ, կամ եղեւ մեզ կալ այնպիս-
եացն ամ մի (*) յունկերութեան, ամս ե-
րիս առ դրան և ամս երկուս հաւասարի
աղօթից և ապա օրինացն հաղորդել :

5. — Որք տխուր հանդերձիւք չոքան
և արտասուօք արամութեան կերան յե-
րախանս զոհիցն՝ լցեալ զժամանակ երկի
ամացն առ դրան և ապա ընկալեալ լիցն
առանց օրինաց (προσφορᾱ). իսկ թէ ոչ
կերան, երկուս ամս յունկերութեան
կացեալ՝ յերրորդումն հաւասարեցին (ան-
դամ եկեղեցւոյ լինել) առանց օրինաց, զի
զկատարեալն (τέλειον, Ս. Հաղորդութիւն)
յետ չորից ամաց ընկալցին : Իշխանութիւն
է եպիսկոպոսաց ի փորձ դարձին մարդա-
սիրութեամբ հայել կամ յաւելու զժամա-
նակ ապաշխարութեանն : Հարց և փորձ
լիցի գնախկին և զյետոյ վարուցն, և ըստ
նմին իրի մարդասիրութիւնն հափեսցի :

6. — Վասն այնոցիկ որ լոկ սաստելով
կամ տանջանօք, կամ տնառութեամբ (յա-
փրջապառութեամբ ընչից) կամ վասն ի տեղ-
եաց օտարացուցելոյ զոհեցին, և մինչեւ յայս
ժամանակս ո՛չ ապաշխարեցին և ո՛չ դար-
ձան, և այժմ ի ժամանակի աստ (ի գու-
մարման ժողովոյն) մերձեցեալ հային ի
միտս ապաշխարութեան և դառնալոյ,
կամ եղեւ զի մինչեւ ցօրն Զատիկն ընդ
ունկերութեան կացցեն, և յետ մեծի աւուրն
ընդ կարգօք լիցին (առ դրան) զամս ե-
րիս, և յետ ա՛յլ երկուց ամաց հաւասա-
րեցին առանց օրինաց և այնպէս եկեա-
ցեն ի կատարեալն զի զվեց ամն բովան-
դակ կատարեցին. իսկ եթէ ոմանք յա-
ռաջ քան զժողովս ընկալեալ եղեն յա-
պաշխարութիւն՝ յայնմ ժամանակէ թը-
ւեցի նոցին սկիզբն՝ զվից ամն կատարե-
լոյ : Իսկ եթէ վիշտ ինչ վտանգի կամ ա-
կրեկալութեան մահու ի հիւանդութենէ
կամ յայլ ինչ պատճառաց պատահեցէ՝
զայնպիսին ընդ սա՛մանաւ (կանոն) կալ-
ցին :

(**) Հայ կանոնք ունին երկու :

7. — Վասն այնոցիկ որ երթան ի solus (*)
հեթանոսաց՝ ուր և տեղի որոշեալ իցէ պըղ-
ծութեան իւրեանց, և ի սեղան նստիցին
զիւրեանց իսկ զկերակուարս տարեալ և
անդ շաշուկցան, կամ եղեւ զի յետ կալոյ
երկուս ամս յունկերութեան, ապա ըն-
կալցին, և եթէ պարտ իցէ զայսպիսին
հաղորդ առնել օրինացն՝ այն ի կամս ե-
պիսկոպոսին է՝ յիւրաքանչիւր վարս հա-
յեցեալ :

8. — Որք երկիցս և երկուցս զոհեցին
(կամ կերան զյաղեալն դից), ամս չորս
ընդ ունկերութեան կացցեն, և երկուս ամս ա-
ռանց օրինաց՝ հաւասարեցին, և յեթեւե-
րորդում ընկալեալ լիցին կատարելու-
թեամբ (այսինքն զկատարեալն [= «զօրէնս»])
ընդունելով : (**)

9. — Այնոցիկ որ ոչ միայն անկան (ի
հաւատոց) այլ և թշնամիք եղեն և բռ-
նադատեցին զեղբարս իւրեանց կամ պատ-
ճառ կացին զի և նոքա բռնադատեցին,
այսպիսիք երիս ամս ընդ ունկերութեան
կալ-
ցին զտեղի և այլ վեց ամս առ դրան
(ընդ կարգօք) կացցեն, և յետ միոյ ամի
հաւասարեցին առանց օրինաց, զի գտան
ամս լցեալ հաղորդեցին ի կատարեալն,
այլ սակայն քննեցին վարք նոցա և՛ յայն-
ժամ ևս (***) :

10. — Սարկաւագունք որ ձեռնադրին
և ի ձեռնադրութեանն յայտարացեն եթէ
պարտ է ինքեանց ամուսնանալ՝ ոչ կա-
րելով մնալ կուսան, յետ ամուսնութեան
ևս կացցեն ի նմին պաշտաման՝ եթէ ե-
պիսկոպոսն թոյլ ետ նոցա ամուսնանալ.
Իսկ եթէ լռեցին ոմանք և ընկալան ըզ-
ձեռնադրութիւն կալով ի կուսութեան, և
ապա մտաբերեցին յամուսնութիւն՝ դա-
դարեցին ի սարկաւագութենէ :

11. — Որ միանգամ խօսեալ և (զուգ-
եալ գտանիցին աղջկունք և ապա յափրջ-
տակիցին յայլոց, կամ եղեւ զի վերստին
տացին ում խօսեալն էին՝ եթէ բռնու-
թեամբ առեանգեալք իցեն :

12. — Որք յառաջ քան զմիջոցութիւն
ընդունել՝ զոհեցին և յետ այնորիկ մկր-
տեցան, կամ եղեւ յատիճան մերձեցու-
ցանել զայնպիսին իրրեւ սրբեալս (աւա-
ղանաւ) :

Ե. Ե. Դ.

(*) Յ. ի solus :

(**) Մեր կանոնին մէջ ապաշխարութեան յաւ-
կացումն տարիներ նոյն չեն :

(***) Մեր կանոնագիրներուն ժ. կանոնը վա-
ղապէսական բացատրութիւններով երկարագումն
է թ. ին :

ԿՐՕՆԱ-ԸՆԿԵՐԱԿԱՆ

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԵԱՆՔԻ ՄԵՉ

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿՐԹՆՔԻ ՄԷՋ

Ահա նախորդ յօդուածով կը խօսէինք
եկեղեցականութեան ներկայիս մէջ ունեւ-
ցած պարտականութեանց վրայ, յաւօք
չեւտելով մասնաւորապէս քահանայու-
թեան անհոգ անաարքերութիւնը՝ նոյն իսկ
իր մասնաւորական զարգացումին, և հետեւա-
պէս իր բարոյական ազդեցութեան ոգ-
դիրքին բարձրացման կարեւոր դործին
մէջ:

Տխուր իրողութիւններ էին պարզուածները, որոնք կ'առաջնորդէին միզ այսօր քիչ մ' աւելի բնագործակիւր մեր հայեացքը, ու բարեպաշտ և ուշիմ ընթերցողին հետ մէկտեղ հետազօտիչ ակնարկ մը նետելու ընդհանուր հայ կեանքին վրայ, փնտռելու համար այն պատճառները, որոնց հետեւակնք միայն կրնայ եղած ըլլալ եկեղեցականութեան անկեալ վիճակը:

Այդ պատճառները բաղմադրված են, և՛ ներթափան և՛ րարոյական և՛ քաղաքական: Գրութեանս ամբողջ սահմանը չի թոյլատրեր խօսիլ այդ բոլոր պատճառներուն վրայ հաւասարապէս: Մնաց որ տոտնց հետազոտութիւնը գուցէ ձանձրացուցիչ ալ ըլլար ընթերցողին, որ ապահովաբար զինք այնքան չահագրգռող կէտեր չբռնելով անոր մէջ, չալտի ուզէր մինչև ծայր տանիլ լնթերցումը:

Մենք կ'ուզենք անդրադառնալ, ուրեմն, այնպիսի կէտի մը վրայ որ հայ հոգևորականութեան դիրքի բարձրացման հետ ամենասերտ առնչութիւն մ'ունենալով հանդերձ, աւելի՛ ընդհանրական հետեանքներ ունեցած է և ունի միշտ հայկեանքին մէջ, ըլլալով ամենակարևոր շարժառիթներէն մէկը՝ Հայուն այսօր չկարենալուն գրաւել տնտեսապէս, իմացականապէս և քաղաքականապէս այն բարձր ու պատուաբեր դիրքը, որուն արժա-

Նի է իր ցեղային բազմակողմանի առավել-
ճելի ձիրքերով :

Այդ խոշոր պատճառը՝ գրութեանն խորագիրն իսկ կը կազմէ։ Անտարբերութիւնն է ան . անտարբերութիւնը կեանքի զանազան պարագաներուն մէջ, անտարբերութիւնը նաեւ՝ ու մասնաւորապէս՝ կրօնքի մէջ։

Կարծուածէն , երեակայուեածէն շատ
աւելի մեծ չարիք մը , աղէ՛տ մըն է այդ՝
մեր ժողովուրդէին համար : Յրանսացի
հուշակաւոր կրօնաւոր մը որ միեւնոյն ա-
տեն լայնամիտ խորհող մը , յեզափոխա-
կան միտք մը եղած է , Լամընէ , քառա-
հասոր ստուալ երկասիրութիւն մը ունի
այս նիւթին՝ Անտարբերութեան վրայ (1) :

«Ամէնէն հիւանդ մարդը, կը գրէ Քրիստոսացի հեղինակը՝ նոյն գործին ներածութեան մէջ, այն չէ որ կը քոտ պայքար մը կը մղէ Սխալին ի նպաստ, այսին որ կ'անտեսէ, կ'արհամարհէ Ճշմարտութիւնը: Հոն ուր բուռն յուզումներ կը նշմարուին, ուժ մը, և հետեւապէս յոյս մը կը գտնուի տակաւին. բայց երբ ամէն շարժում մարած է, երբ բազկերակը դադարած է զարնելէ, երբ ցուրտը պատած է սիրտը, այն ատեն ինչ կարելի է սպասել, եթէ ոչ մօտաւոր և անխուսափելի կազմալուծում մը: ... Այն մահատիպ անտարբերութենէն ուր ինկած է Եւրոպա, այն խորունկ թմբութենէն ուր կը տեսնենք զինքը, ո՞վ պիտի պահէ զայն. ո՞վ պիտի ռեկտրէ այս չոր կմախքները: Բարին, չարը, կեանքի և մահուան ծառերը՝ միեւնոյն հողով սնած, կ'աճին ժողովուրդներուն մէջ որ ստանց գլուխին վերցնելու կ'անցնին, ձեռքերնին կ'երկարեն և ըստ ըստին կ'առնեն անոնց պտուղները: Կրօնք, բարոյական, պատիւ, պարտականութիւն, ամէնէն

(1) F. de Lamennais, *Essai sur l'Indifférence en matière de religion*, 4 vol.

նուիրական սկզբունքները, նա'և ամենէն ազնիւ զգացումները՝ այլեւս տեսակ մը երազ են իրեն համար, փայլուն և թեթեւ ուրուականներ որ վայրկեան մը կը շարժուին մտածումի հեռաւորութեան մէջ, և շատ չտեսած կ'աներեւութեանն անդարձ: Ո՛չ, այսպիսի բան տեսնուած չէր բնաւ. երեակայել անգամ կարելի չէր: Երկար և յարասե ճիգեր պէտք եղած են, մարդ անխոնջ պայքար մը մղել ստիպուած է իր խղճին և բանականութեան դէմ, վերջ ի վերջոյ հասնելու համար այս անբան անհոգութեան: Վայրկեան մը ակնարկ նեանցէք ստեղծագործութեան թագաւորին վրայ. ի՞նչ անհասկանալի նուաստացում: Իր նկուն միտքը մոռթին մէջ միայն հանգիստ է. անգիտանալն իր հաճոյքն է, իր խաղաղութիւնը, իր երջանկութիւնը: Նոյն իսկ զինքն ամենէն աւելի շահագրգռող բանը ճանչնալու բաղձանքը կորսնցուցած է: Հաւասար զլուանքով մը կը դիտէ ճշմարտութիւնն ու սխալը, և այնպէս հաւատալ կը կեղծէ թէ կարելի չէ զանոնք իրարմէ որոշել՝ որպէսզի կարենայ հաւասար արհամարհանքի մէջ չփոխել զանոնք: Իմացական վատասերման ծայր աստիճանն է այս, որուն մարդ կարենայ հասնիլ: Արդ, երբ մէկը կը դիտէ այս զարմանահրաշ մոլորանքը, չգիտեմ ի՞նչ աննկարագրելի գուշակ մը կը համակուի մարդկային բնութեան վրայ. որովհետեւ կարելի է երեակայել աւելի՛ թշուառ վիճակ մը քան կայութիւնն այն էակին որ հաւասարապէս տղէտ է իր պարտականութեանց և ճակատագրին, և բանականութեան աւելի տարօրինակ տակնուվրայութիւն մը՝ քան այն որ մարդ իր հպարտութիւնն և երջանկութիւնը կը փնտռէ ճիշտ այն տգիտութեան մէջ որ անմխիթար հեծեծանքի մը աւիթ պէտք է ըլլար»:

Հայ Համբնէի մը պէտք կար, ճշգրիտ գոյներով նկարագրելու, կարճատես աչքերու, կամաւոր կոյրերու առջև պատկերացնելու համար այն տխուր կացութիւնը որուն ենթարկուած է Հայ ժողո-

վուրդի ընդհանրութիւնը, — ուրիշ շատ մը պատճառներու հետ — ժողովրդային ամէն խաւերու մէջ տիրող մեռելային անտարբերութեան հետեւանօք: Հայը, ցեղային ոգիով անմիաբան, իրեն երկրորդ բնութիւն, տխուր ունակութիւն մ'ըրած է անտարբերութիւնը, անհոգութիւնը ամէն այն բաներուն հանդէպ որ ուղղակի կապ չունին իր անձնական շահուն հետ, շահ բառով հասկնալով նիւթական, դրամական ամենէն անձուկ տեսակէտը: Արեւելեան ճակատագրապաշտ ժողովուրդի մը հետ դարերէ ի վեր դրկից ու բնակաւրկից, Արեւելքի ինքն ալ, գերազոյն երջանկութիւն մ'է իրեն՝ իրերու և երեւոյթներու բացարձակապէս անհետաքրքիր՝ յոյ և ծոյ անտարբերութեան մ'ընձեռած հանգիստը: Այդ է իր խտէալը, իր բաղձանքներուն գերազոյն ամենաբարձր նպատակակէտը: *Après moi le déluge*, ըսեր է Ֆրանսական առածը: Արեւելքին՝ աւելի սահմանափակելով անձնատիրութեան աստիճանը՝ «Ինծի չդպչող ծնն հալար տաւրի թո՛ղ ապրի» բանաձեւեր է: Այս է իր անխախտ փիլիսոփայութիւնը. թո՛ղ իրեն չդպչին, և անկէ անդին բա՛ն մը հոգը չընեն: Անտարբեր է հանրային կեանքին, ազգային կեանքին, դպրոցի կեանքին, եկեղեցական կեանքին, իր հոգեւոր կեանքին, և նոյն իսկ իր նիւթական կեանքի վաղորդայնին՝ եթէ երբեք այդ կեանքով հետաքրքրուելու, և լաւագոյն վիճակ մը ձեռք բերելու համար քիչ մը ճիգի, ու քիչ մըն ալ զոհողութեան պէտք կայ: Ինչո՞ւն պէտք, աշխարհի սխալն ինք պիտի չտկէ՝ թո՛ղ իրմէ խելացիները, իրմէ հարուստները մտածեն: Ու ցաւալին այն է, որ բոլորն ալ այսպէս կը մտածեն ու բոլոր գործերն ալ կը կաղան:

Պատեցէք Պալտոյ ո և է մէկ թաղը, և նոյն տխուր երեւոյթներուն հանդիսատես պիտի ըլլաք. նո՛յն լքումը հանրային գործերուն, որոնց կարգադրութեան համար մէկ քանի անձնուէրներ կ'աշխատին իրենց խելքին ու կարողութեան ներած չափով. բայց անոնք ալ առաջին մէկ երկու

ամիսներու ոգեւորութենէ ետքը կը ջր-
լաստւին բոլորովին, ցուրտ անտարբերու-
թիւն մը, պակուցիչ ամայութիւն մը տես-
նելով իրենց շուրջը: Եւ ասո՛ր համար
վարժարանները կը մնան միեւնոյն ան-
կերպարան վիճակի մէջ, թաղային զանա-
զան գործեր անստոյգ կացութեան, և
գլխաւորական ձեռնարկները՝ ամուլ և ա-
պարդիւն:

Իրաւ է որ երեսնամեայ բնակալու-
թիւն մը բխայուցած էր մեր միտքերը, և
ամէն ոք հարկադրուած էր իր պատեանին
մէջ քաշուիլ փորձանքէ մը, զրպարտու-
թենէ մը զերծ մնալու համար: Բայց ազա-
տութիւնը՝ իր բերած վազանցիկ ոգեւո-
րութենէն ետքը, ոչինչ փոխեց մեր ըն-
դարմացած, թմրած ուղեղին մէջ:

Ու ժողովրդային անտարբերութիւնը
այն աստիճան ծաւալուն հանգամանք
մ'առած է որ անով համակուած կը տես-
նուին շատ մը հանրային մարմիններ ալ,
որ նոյն ժողովուրդի անհատներէն կազ-
մուած են, եւ անոր բոլոր թերութիւն-
ներն ալ — նա՛ն առաւելութիւնները — ժա-
ռանգած կատարելապէս:

Այս հոգեկան վիճակը, սովորական՝
Հայուն հանրային կեանքին համար, կը
տարածուի նոյն իսկ մեր անհատական
կեանքին ու գործառնութեանց մէջ: Ի-
րաւ է որ ամէն մարդ նիւթական շահը
կը փնտռէ, բայց նոյն իսկ այդ շահուն
ապահովութեան և յաւելման ու բազմա-
պատկութեան համար անհոգ կը գըտ-
նուինք, սովորամուլ ու դատապարտելի
անտարբերութեամբ մը: Ի՞նչ աւելորդ
յոգնութիւն, ինչո՞ւ պարապ տեղը նե-
ղուիլ՝ ցարդ մեր ձեռքը գտնուածներէն
դուրս շահու նոր աղբիւր մը գտնելու,
գործի նոր ասպարէզ մ'ստեղծելու համար:
«Մեր հայրերն ու պապերը սնօթի՞ մնա-
ցեր են մինչև հիմա. մեռնիլ կա՞յ թէ ոչ.
հօրմէս ի՞նչ որ սորվեր եմ, անանկ կ'եր-
թամ. ան ի՞նչպէս որ ապրեր է, ես ալ
անանկ կ'ապրիմ: Առտուած պեղեցիք տայ,
թո՛ւ մը անօթի չենք մնացեր, ինչպէսն ու-
րէն չենք մնար»:

Այս սովորամուլ անտարբերութիւնը

պատճառ կ'ըլլայ որ մեր բեղնաւոր երկ-
րին շահու բազմազան և ճոխ աղբիւր-
ները կ'անցնին մեզի դրկից ուրիշ հա-
սարակութիւններու և կամ բոլորովին
օտար Եւրոպացիներու ձեռքը, որոնց քով
օրին մէկն իրրե ծառայ աշխատիլ մեծու-
գոյն բախտ մը պիտի ըլլայ մեզի:

Ու երբ նիւթական, այսօրուան ծանօթ
կեանքի պէտքերուն համար ախքան ան-
տարբեր կը գտնուինք, որո՞ւ մտքէն
կ'անցնի խորհիլ հոգեւոր, ապագայի ան-
ծանօթ կեանքին համար:

Ի՞նչ է այդ ապագայի կեանքը, իրօք
այդպիսի կեանք մը գոյութիւն ունի՞
ի՞նչ է յաւիտեանականութիւնը, ի՞նչ է կրօն-
քը, ժողովուրդը կարգապահութեան և
բարոյականի մէջ պահելու համար եղած
մարդկային հաստատութիւն մըն է պար-
զապէս, թէ ստուգիւ անիկա յայտնուած
է տիեզերական Արարչի մը կողմէ, և իր
ճշմարտութիւնները անփոփոխ են ու իր
պատուէրներու կատարումը անհրաժեշտ՝
մարդուս հոգեւոր կեանքին փրկութեան
համար:

Ահաւասիկ հարցումներ, որ երբեք չեն
դադնեցներ մեր միտքերը, համակուած
ըլլալով մահատիպ թմրութեամբ մը, ցուրտ
անտարբերութեամբ մը որ՝ ինչպէս տե-
սանք Լամբնէի հաստատման մէջ՝ նախա-
քային է մօտալուտ, անխուսափելի կազ-
մաւորման մը, և կամ տիրապետութեանը
տակ գտնուելով վատախտարակ նիւթա-
պաշտութեան մը, զուրկ հոգեկան ու և է
ազնիւ ձգտումէ, բարձր իտէպէ:

«Նիւթապաշտութիւնը, կը գրէ Յրան-
տայի գիտնական մը՝ վերջերս հրատարա-
կած մէկ գործին մէջ, (1) լ'երեւայ քաղա-
քակրթութեանց երկու շրջաններու միջո-
ցին. նախ՝ այդ քաղաքակրթութեանց
ծնունդէն առաջ ի յայտ կուգայ, և երկ-
րորդ՝ կը ծաղկի անոնցն առաջին միջոցին:
Վայրենի ժողովուրդները նիւթը կը պաշ-
տեն, ծերացած ազգերը կորուսած են պաշ-

(1) SCIENCE ET SPIRITUALISME,
par Ch. Fiessinger, Membre correspon-
dant de l'Académie de Médecine.

տելու ուժը: Առաջինները նիւթապաշա-
կն՝ իրերու արտաքին երեւոյթին խորը
թափանցելու անկարողութեան հետեա-
նօք: Իսկ երկրորդները՝ որովհետեւ ներ-
քին ճիշդ մ'ընել չեն կրնար: Նիւթապաշ-
տութիւնն եթէ արդիւնքը չէ ագիտու-
թեան, պտուղն է իմացական յոգնու-
թեան: Վայրենիները կոյր են, իսկ կեան-
թի հաճոյքներով յափրացած ժողովուրդ-
ներն ինքզինքնին սաստիկ մաշեցուցած»:

Բացայայտ, անվիճելի իրողութիւն է
նիւթական կեանքէն դուրս ուրիշ ամէն
բանի, և մանաւանդ հոգեկան կեանքի
վերաբերող հարցերու հանդէպ ցուրտ ան-
տարբերութիւնը որ կ'երեւայ հայ ժողո-
վուրդին մէջ: Եւ քանի որ բիրտ նիւթին
պաշտումն և հոգեկան բարձր պէտքերու
հանդէպ անտարբերութիւնը կ'ենթադրէ
կամ վայրենութիւն և կամ քաղաքակր-
թական սաստիկ յոգնութիւն և ու է ազ-
նիւ ճիշդի, վսեմ թռիչքներու անկարո-
ղութիւն պիտի հարկադրուինք հետեցնել
թէ քաղաքակրթութեան սպառող, մաշե-
ցնող ազգեցութիւնը կրած ենք, ա-
ռանց անոր բարերար արդիւնքները վայե-
լած ըլլալու լիովին: Ասիկա, ինքին շատ
ցաւալի եզրակացութիւն մը մեր մասնա-
նշած վիճակին, նորէն ամէնէն պատուա-
բեր ելքն է խնդրոյն, որովհետեւ հակա-
ռակ պարագային հարկ պիտի ըլլար եզրա-
կացնել թէ մենք, Հայերս, դեռ քաղա-
քակրթութեան սանդուղին ամէնէն վարի
աստիճանին իսկ չենք կոխած, ինչ որ սխալ
մը պիտի ըլլար անշուշտ մեզի համար, որ
կ'յաւակնինք Արեւելքի մէջ Արեւմուտքի
քաղաքակրթութիւնը տարածելու գերա-
զանց կարողութեամբ օժտուած ցեղ մ'ըլ-
լալ:

Մէկզի՛ ուրեմն աղետաբեր անտարբե-
րութիւնը մեր բարքերուն մէջէն, եթէ
կ'ուզենք ճշմարիտ քաղաքակրթութեան
կենսունակ հիւթովն օժտուած ցեղ մը
ցուցնել ինքզինքնին: Ինչ մը կորով, քիչ
մը կամք, ու պիտի կարենանք թօթափել
մահատիւ թմրութիւնն որ մասնաւորա-
պէս մայրաքաղաքի հայութեան մէջ կ'երեւայ,
և որով անտարբեր հանդիսատեսներ կը

դռնանք մեր ազգային-ընկերային կեան-
քին քայքայման արտում երեւոյթներուն,
մեր վարժարաններու աննպաստիկ, անծը-
րապիւր և յաճախ դէպի ետ քայլերուն,
մեր եկեղեցիներու ամայացման, մեր հոգե-
կերականներու նիւթապէս ու բարոյա-
պէս անկման, և անճապէս մեր հոգեւոր
ու բարոյական կեանքի փճացումին:

Անտարբերութիւնն ամէնէն հակայ ար-
գելքն է ու է յառաջդիմութեան, անի-
կա մահաշունչ խորչակն է որ պիտի թն-
ւածեցնէ մեր բարոյական կեանքի բու-
րաստանին ամէնէն վիթխարազարդ ծա-
ղիկները, գեղեցիկ զգացումները, բարձր
ազնիւ ձկառումները, մտքի վսեմ թռիչք-
ները. հոգիի իտէպլ վերացումները:

Ժողովուրդ մը որ զուրկ է հոգեկան
այդ ազնիւ զգացումներէն իմացական հը-
զօր ճիւղեր ընելու կորովէն և տոկուն
նկարագրէն, մեռած ժողովուրդ մ'է, կամ
գոնէ հոգեվարքի մէջ:

ՀԱՐՄԱՅԻՐ ԿԱՀԱՆԱԾ

Պեթիքաւ

ԴԵՊ Ի ՏԱՃԱՐԸ

Ապտոստոս լեռներու կը մագլցիմ կողմ ի վերս
տոյսմն է դա հոգիիս՝ դէպի կասարն Ովիէի,
Ուխտարիս մեհաւոր՝ աղօթն է այն կամըւր
Որ խւնկի պէս զայարուն՝ անհունին մէջ ծաւալի:
Դարեւու մռայլ մը հակսիս՝ ամրապարիսկ
Տանարին

Թէ բոլորսին ալ յածիմ, մոտս մ'է դռնէն շուտնի,
Ոյր բալին մէջ խռովայոյց տեսարաններ կ'աւարին...
Յեծե՞րգ քէ վիտս՝ հեծեծանք, խիղճս այդ ցաւէն
կ'արիւնի...:

Եւ ցատումէս կ'արմած՝ կ'ըսեմ ո՞ւր է ննովան,
Հոս հազարներ անօթի, հո՞ն կ'ողորմեմ որքն ու այրիմ.
Դէպի Տանա՛ր կը դիմեմ, ուր բուրմն ու սուրբը
կուլան...

Անա՛ կ'ըսեմ շէրիսն, խորհրդանիւն այն դաժան,
Ոյր խուցին մէջ պաշտամբի խուցին ու գոռուսը
կ'այրին...:

Գուրին մէջ լոկ ա՛մ վրտեմ սէրն ու հաւասք լոյս
կուտան:

ԳՈՒՍԱՆ

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՄՈՒՆԵՐՈՒ ԳԱԼՈՒՍՏԸ

(Մաս. Բ, 1—12)

Ժամանակագրական կարգով մոգերու գալուստը տաճարի ընծայումէն վերջը պէտք է տեղի ունեցած ըլլայ: Հակառակը պընդողներ ալ կան, բայց անոնց ենթադրութիւնը շատ կամայական և անընդունելի է: Մոգերու գալուստէն անմիջապէս վերջը պատահեցաւ Բեթլէհէմի մանուկներու կոտորածը. հետեւաբար տաճարի ընծայումը պէտք կ'ըլլայ հեռացնել մինչև Յիսուսի Նգիպտոսէն դարձը, այն ատեն, երբ Հերովդէս մեռած էր արդէն: Ինչպէս գիտենք, Հերովդէս մեռաւ Յիսուսի ծնունդէն զրեթէ երեք ամիս յետոյ, ինչ որ կը պարտաւորէ զմեզ ընդունիլ թէ ընծայումը կատարուեցաւ ոչ թէ 40՝ այլ 80-90 օր յետոյ: Այս կը հակասէ սակայն Ղուկասի խօսքերուն, որոնցմէ բացայայտ կը հասկըցուի թէ «Իբրև լցան աւուրք սրբութեան նորա», այսինքն քառասուն օրերը, Յիսուս ընծայուեցաւ տաճարին:

Աւետարանին մէջ մեզ բառը շատ անորոշ իմաստ մ'ունի. ասոր համար ալ զանազան կարծիքներու ծնունդ տուած է: Այս բառով կը հասկցուին ընդհանրապէս պարսկական կրօնի մէջ կրակի պաշտամունքին նուիրուած քուրմերը, որոնք գիտնականի համբաւ ալ կը վայելէին: Այս բմբռնումով աւետարանի մոգերը ումանք Պարսկաստանէն եկած կը կարծեն. բայց այս ենթադրութիւնը անհիմն է, նկատի առնելով երկրին հեռաւորութիւնը և նոյն ժամանակի պարսիկ մտքերու տրամադրութիւնները: Ընդհանրացած համոզումն այն է թէ այդ մոգերը կուգային Արաբիայի կողմերէն, ուր առատ էին աղնիւ մետաղներ և անուշահոտ խուսկեր: Հաւանական է որ այս աւանդութեան իբրև հիմ ծառայած ըլլան Սաղմոսի այն խօսքերը թէ՛ «Թագաւորք Թորոսի և կրղզեաց պատարագս մատուցեն նմա. թագաւորք Արարա (ըստ բնագր. Շաբա) և Սարայ պատարագս բերցին նմա» (ՀՍ.

10): Այս աւանդութիւնը սակայն ամէնէն ճիշդը կ'երեւի. վասն զի արդէն կանուխէն Արաբիայի և Հրէաստանի միջև բարեկամական յարաբերութիւններ հաստատուած կը տեսնենք և բմբռնումներու շուրջումներ ալ եղած էին անշուշտ երկու աշխարհներու միջև: Աստեղագիտութիւնը, որուն բուն ծննդավայրն էր եղած Քաղդէաստան, արեւելեան բոլոր հին ժողովուրդներուն գիտութիւնն էր դարձած: Հոս յիշուած մոգերը հաւանաբար այդ գէտերէն պէտք էին եղած ըլլալ, որոնք երկնային մարմիններու դիրքին և շարժումի ձեւերուն նայելով գուշակութիւններ կ'ընէին:

«Ո՛ր է որ ծնաւ արքայն հրէից» . անտարակոյս Երուսաղէմ մտնելէ և Յիսուսի ծնունդի լուրը առնելէ վերջն է որ մոգերը այս հարցումը կ'ընեն:

Հերովդէսի վրդովուելը շատ բնական էր, վասն զի ինքը Նգովմայեցի մ'ըլլալով՝ օրինաւոր ժառանգը չէր թագաւորական գահին. հետեւաբար և իր անկումը կրնար ըլլալ հաւանական նոր արքայազունի մը ծնունդով: «Ամենայն Երուսաղէմի» խրուովուիլը այս իմաստով կարելի չէ իմանալ. աւետարտը ու հրաշալի լուրի մը առթած սրտի բերկրանքն ու անզուսպ հետաքրքրութիւնն է այն, կամ՝ ուրիշ կերպով՝ «Ամենայն Երուսաղէմ» բացատրութիւնով պէտք է հասկնալ Հերովդէսի բոլոր կուսակիցները, ինչ որ շատ հաւանական չէ:

«Հարցանէին ի նոցանէ թէ ո՛ր ծնանիցի Բրիստոմն»: Այս խօսքերը ցոյց կուտան թէ Հերովդէս շատ ազօտ գաղափար մ'ունէր Մեսիայի մասին և շատ ալ չէր հետաքրքրուած անով, ինչ որ կը հաստատէ նաև մինչև մոգերու գալուստը Բեթլէհէմի մէջ կատարուած զէպքերու հանդէպ իր ունեցած անտարբերութիւնը: Հերովդէս մոգերու խօսքերէն վրդովուելով կ'ուզէ փարատել իր կասկածները և պատրանաթափ ընել մոգերը, ուստի կը փորձէ

ստուգել Մեսիային ծնանելիք տեղը քահանայապետներէն ու զպիւրնէն՝ որոնք մէջ կը բերեն Մեսիայի մարգարէութիւնը, ուր Իսրայէլի ժողովուրդը հովուող իշխանին ծննդավայրը նշանակուած է Բեթլեհէմը:

«Ստուգեացի նոցանէ զժամանակ աստեղն երեւելոյ (= երեւցած աստղին): Թէ այդ թուականին երկնային այդպիսի երեւոյթ մը տեղի ունեցած է՝ Աւետարանէն զատ կը հաստատէ նաև աստղաբաշխական գիտութիւնը: Երկնային մարմիններուն մէջ այս օրինակ երեւոյթներ անպակաս են: Յիշենք ասոնցմէ մէկը: 1603 Դեկտմբ. 17ին Լուսնթագ ու Երեւակ մուրաբնները իրարու հանդիպեցան Ձուկ համաստեղութեան վրայ: Այս հանդիպումը կրկնուեցաւ հետեւեալ զարուհին Հրատ մոլորակի մօտ, և Սեպտմբ. ամսուն մէջ 1604ին Հրատի ու Երեւակի մէջտեղ նոր աստղ մը երեւցաւ, որ ամբողջ տարի մը փայլելով՝ աստիճանաբար սկսաւ նուազիլ 1606ի Մարտ ամսուն և վերջապէս անհետացաւ:

Քէրլըր, գերմանացի նշանաւոր աստղաբաշխը (1571—1630) մասնաւոր ուշադրութիւն դարձուց այս իրողութեան վրայ և հաշուելով գտաւ որ Հռոմի թուական 747ին Լուսնթագ ու Երեւակ իրարու հանդիպած են Ձուկ կենդանակերպին վրայ և 748 թ. զարնան անոնց հետ միացած է նաև Հրատ:

Քաղզէացի աստեղագէտները, որոնցմէ էին հաւանաբար հոս յիշուած մոգերը, մեծ դէպք մը կատարուելու գուշակութիւն կը նկատէին մոլորակներու այս կերպ հանդիպումը: Եւ որովհետեւ Ձուկ համաստեղութիւնը աստեղագէտներու կարծիքով Հրէաստանի ճակատագիրին հետ կապ ունէր, ասոր համար մոգերու ուշադրութիւնը դարձուց այդ աշխարհի վրայ (1):

(1) Տե՛ս Ֆարաբի կեանքի Յիսուսի, հայ. քրգմ. էջ 16—18.—

«Չինաց աստղաբաշխական աղիւտակներու մէջ նշանակուած է թէ այդ ժամանակ երկնում նոր աստղ մ'է երեւցեր»:

Անտեղի չէ ենթադրել թէ մոգերը 747ի Դեկտեմբերի մէջ դիտեցին այս երեւոյթը և ճամբայ ելան այն ատեն՝ երբ ալ աստղը պիտի անհետանար, այսինքն 750ին, վասն զի այդ երկու մոլորակներու հանդիպումի ժամանակին տեւողութիւնն է՝ վերոյիշեալ հաշուին համաձայն՝ երկու տարի և քանի մը ամիս:— Մոգերը՝ անշուշտ՝ աստղին երեւնալուն բուն ժամանակը յայտնեցին Հերովդէսի՝ որուն հարցապնդումը նպատակաւոր էր, ինչպէս յետոյ պիտի տեսնենք:

«Գնացէ՛ք, ստուգեցէ՛ք վասն մանկանն»: Հերովդէս չէր գիտեր թէ ո՛ւր ծնած է Յիսուս, և ո՛չ ալ թէ ո՛ւր կը գտնուէր նա, ուստի մոգերուն կը պատուիրէ ստուգել այդ պարագաները: Կրնայ ըլլալ նոյնպէս որ Մարիամ և Յովսէփ կանխաւ լսելով Հերովդէսի կոսկածոտ վերաբերումը մանուկ Յիսուսի հանդէպ՝ զայն գաղտնի տուն մը պահած ըլլան: Հերովդէս արդարեւ մոգերու միամտութիւնը կ'ուզէ չահագործել իր վայրագ ծրագիրը իրագործելու համար, «Յորժամ գտանիցէք— կ'աւելցնէ— ազդարասիք ինձ, զի և ես եկեալ երկիր պագից նմա»:

«Եւ ահա աստղն՝ զոր տեսին յաւելեալ» . այսինքն իրենց երկիրը՝ որ Արեւելքի մէջ կը գտնուէր. և արդարեւ Արարիա արեւելեան երկիր մը կը նրկատուէր: «Առաջնորդեաց նոցա» . աւելորդ է անշուշտ շարժումի գործողութիւն մը տեսնել «առաջնորդեաց» բառին մէջ: Ասով մէկտեղ ո՛րքան ալ բնական ու գիտական եղանակով մը ուզուի բացատրել աստղին երեւումը՝ սա ստոյգ է թէ Մատթէոս հրաշալի երեւոյթ մը միայն կը համարի զայն, աստուածային յայտնութեան նորօրինակ լոյս մը՝ (1) որ հեռա-

(1) Ոսկեբերան իր «Մեկնութիւն Մատթէի» գործին մէջ (ձառ. 2) կ'ընէ. «այն աստղը սովորական աստղերէն մէկը չէր, մանաւանդ թէ ո՛չ իսկ աստղ մ'էր այն, ինչպէս ես կը կարծեմ, այլ աներեւոյր զօրութիւն մը՝ այդ կերպարանքին ճակ երեւցած». Եւ իր այս խօսքեր կը վստասեմք՝ առեւտրանքին իսկ խօսքերով:

ւոր աշխարհէ եկող մոգերը կ'առաջնորդէր մինչեւ հոն՝ «ուր էր մանուկն» :

«Իբրեւ տեսին զաստղն» : այս խօսքերէն կ'ենթադրուի թէ աստղը պահ մը ծածկուեցաւ մոգերու աչքերէն, ինչ որ կը բացատրէ մոգերու վերեւ բրած հարցումը թէ՛ «ուր է որ ծնաւ արքայն Հրէից» : Այս հարցումը անտեղի պիտի ըլլար՝ եթէ աստղը սկիզբէն առաջնորդէր զիրենք մինչեւ մանուկին զտնուած տեղը և պէտք չիկար խնդալ «յոյժ՝ ուրախութիւն մեծ» : որ անակնկալի մը առջեւ սրտի բերկրանքին զուարթ արտայայտութիւնն է :

«Իբրեւ մտին ի տունն» : Բացի վերեւ յիշուած պարագայէն (Հերովդէսի երկիւղէն) Մարիամի և Մանուկին արգահատելի վիճակը անշուշտ չատերու գոլթը շարժեց և իջեալն ճշնող միջնորդութեն ու անյարմար չըջանակէն շուտով ազատեցին զանոնք, քան մը մէջ ամիտփելով անոնց չքաւորութիւնը :

«Անկեալ երկիր պագանէին նմա» : Արեւելքի մէջ երկրպագութիւնը զուտ կրօնական նշանակութիւն չունի, խորին մեծարանքի ու յարգանքի քաղաքավարական ձև մ'ալ է ան : Աւելորդ է ըսել թէ մոգերունը վերջին իմաստով պէտք է առնել :

Յիսուսի ընծայուած նուէրներուն խորհրդանշական իմաստ մը տալ (*) ա՛նքան կամայական է ո՛րքան ընծայաբերուած նիւթերու թիւին համեմատ մոգերու թիւն ալ երեք նկատելի : Ո՛չ Աւետարանը և ո՛չ ալ արտաքին պատմութիւնը բան մը չեն ըսեր այս մասին : Աւանդութիւնն է միայն որ նոյն իսկ անուններ կուտայ մոգերուն և առանձին ծագում կ'ընծայէ իւրաքանչիւրին (**) :

(*) Ըստ որում ոսկին տնուած է իբրեւ քաղաւորի, կնքուկը իբրեւ Աստուծոյ եւ զմուռս իբրեւ մարդու :

(**) Աւանդ լքիւնը միաճամբու Մեկոն, Գաւաղար եւ Պաղտատար անուններ կոտայ անոնց եւ վերջինը կը նկատուի սեւաղէմ : Ոսկեբեռն թուփն առաքեալի ձեռքով Բիւսոնէութեան դարձած կը կարծէ զանոնք եւ գործակիցներ եղած նոյն առաքեալն եւն եւն :

«Եւ հրաման Ընտելի տեսեան»՝ չըմուռնալ անդրէն առ Հերովդէս : Հաւանաբար մոգերը հասկցան Հերովդէսի գաղտնի դիտաւորութիւնը, երբ մանաւանդ թագաւորին խօսքերն ալ հաղորդեցին անշուշտ Յովսեփի և Մարիամի՝ որոնք արդէն չնկոյններ կրնային լսած ըլլալ : Յիսուսի ծնողքին կողմէ արուած խորհուրդը և երազի մէջ եղած ազգարարութիւնը փոխել տուին մոգերուն բռնկիք ճամբուն ծրագիրը, որոնք տարբեր ճամբով մը գացին իրենց երկիրը, «Եղովմայեցի յափշտակիչը» թողլով իր կասկածներու և իր արիւնոտ ծրագիրին որոշումին մէջ :

ՄԵԿԵԻՉ

ՆԵԼԼԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԿԱՄ

ՅՈՒՆԱՐԷՆԻ ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆԸ
ԱՐԵՒԵԼԻԻ ԵՒ ՄԱՍՆԱՌԱՌԱՊԷՍ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Հին ժամանակի մէջ խօսուած բոլոր լեզուներէն ապահովապէս յունարէնն էր որ ամէնէն աւելի տարածուեցաւ հին աշխարհի վրայ : Այն բարբառը, որ բուն Յունաստանի մէջ ծնունդ առաւ, տակաւ առ տակաւ տարածուեցաւ չըջակայ երկրները, գրաւեց Թիսալիա, Մակեդոնիա և Փոքր Ասիոյ յունական գաղթականութիւնները, և վերջապէս ընդհուպ տիրացաւ արեւմտեան Ասիոյ նշանակելի մէկ մասին :

Յոյն լեզուին գերակշռութիւնը չյայտնուեցաւ միայն այն զաւառաբարբառներու վրայ՝ որոնց հետ նա անմիջական չըփուծի մէջ էր, այլ նոյն իսկ կրցաւ անոնցմէ մէկ քանիները մոռցնել, ինչպէս անոնք որ նախապէս Թիսալիոյ և Թրակիոյ մէջ խօսուած էին : Այն տեղերը ուր յունարէնը երկրին մէկ մասին վրայ միայն կ'տարածուէր, և մանաւանդ այն ծովեզերեայ կողմերը ուր հելլէնները գաղթականութիւններ կամ վաճառատեղիներ հաստատած էին, նա զանազան տեղերու մէջ խօսուած զաւառաբարբառները երկրորդական աստիճանի վերածեց ուր գերա-

կշիռ էր յոյն ժողովուրդին վաճառականական գործունէութիւնը։ Այսպէս օրինակի համար, Սիւրբիոյ, Հրէաստանի և Ստորին-Եգիպտոսի մէջ յունարէնը զրական և գիտական լեզու մը դարձաւ ու իր գիրքը պաշտպանելու համար մաքառեցաւ ազգային գաւառաբարբառներու դէմ, զորս կրցաւ ամբողջութեամբ անհետացընել։

Իր ամենամեծ ծաւալումին աստեղ, յունարէնը կ'իստուէր Սիկիլիայէն մինչև Տիգրիսի ափունքը, Սև-Մովէն մինչև եթովպիա։ Լեզուի մը այս արտակարգ ծաւալումը, որ նախ աշխարհագրական բաւական նեղ սահմաններու մէջ ամփոփուած ըլլալով իր մեկնակէտէն չատ հեռու գտնուող երկիրներ գրաւեց, ապահովապէս ամէնէն հետաքրքրական երևոյթներէն մէկն է զոր լեզուին յիշատակարանները կ'ընծային գիտողին խորհրդածութիւններուն։ Յունարէնը ծագումով արիական մեծ ընտանիքէն սերած պղտիկ ժողովուրդի մը մասնաւոր գաւառաբարբառն էր, յետոյ պաշտօնական և գիտական լեզուն եղաւ բոլոր այն ազգերուն որոնց հետ Յոյները յարաբերութեան մէջ էին, և իր ստացած զարգացումը յայտնի ապացոյցն է իր գերակշռութեան հնդեւրոպական և սեմական գաւառաբարբառներուն վրայ՝ որոնց կրցաւ տիրապետել, երբ կատարելապէս չյաջողեցաւ ջնջել դանդաղ։ Ռեղոսն շատ պատշաճօրէն դիտել կուտայ թէ նմանօրինակ երևոյթ մը երևցած է միջին դարու ամբողջ ընթացքին մէջ, սեմական գաւառաբարբառներու ընտանիքին վերաբերող լեզուներէն մէկուն՝ արաբէրէնի համար, սա տարբերութեամբ որ, եթէ երբեմն այս վերջին լեզուին տարածումը աւելի մեծ և աւելի արագ եղած է քան յունարէնինը, սակայն երբեք չկրցաւ յաղթական կերպով իր գերակայութիւնը ընդունիլ տալ այն ժողովուրդներուն որոնք տարիներով իսլամական տիրապետութեան հպատակ էին։ Յոյն լեզուի միջոցաւ ձեռք բերուած զարգացման և իր գրականութեան գլխի գործոցներուն ընդհանրացման արդիւնքն եղաւ

քաղաքակրթիչ և բարերար ազդեցութիւն մը յառաջ բերել ժողովուրդներու հանճարին վրայ՝ ուր այս լեզուն յատկապէս կ'գործածուէր, մինչդեռ արաբերէնը, հակառակ իսլամ աշխարհակալներու ջանքերուն, չյաջողեցաւ ջնջել հելլենական լեզուին դարաւոր ազդեցութեան արդիւնքը։

Յունարէնին՝ ուրիշ գաւառաբարբառներու վրայ՝ որոնց հետ չիման մէջ էր, բրած վճռական ազդեցութեան պատճառներէն մէկը, այն նշանակելի խորշումն է զոր յոյն ժողովուրդը ամէն ժամանակ ցոյց տուաւ օտար լեզուներու ուսման և գործածութեան հանդէպ։ Յոյները՝ ազգային լեզուն խօսելը իրեն առանձնապատուկ ձիրք մը համարելով իրենց, երբեք չխորհեցան ընտելանալ լեզուներուն այն բարբարոս ժողովուրդներուն՝ որոնց հետ յարաբերութեան մէջ էին, և օտար լեզուներու հանդէպ անոնց ցոյց տուած այս անտարբերութիւնը փոքրիկ պատճառ մը եղած չէ այն ծաւալումներուն զոր իրենց յատուկ բարբառը ստացաւ այն երկիրներուն մէջ ուր Յոյները հաստատուած էին աշխարհակալութեան կամ վաճառականութեան ոգիէն մղուած։ Երբեմն այս ընդհանուր օրէնքէն քանի մը բացառութիւններ կ'տեսնուին, զոր օրինակ Թեմիսդոկէս, որ սորվեցաւ և ղեկընթեամբ կ'իստէր պարսից լեզուն։ Ընդհակառակն, Արեւելցիները մասնաւոր յարմարութիւն մ'ունէին, ինչպէս այսօր ալ, օտար ժողովուրդներու լեզուները սորվելու համար, և մասնաւորապէս մեծ նախասիրութիւն մը կը ցուցնէին յունարէն լեզուի ուսման։ Մակեդոնական աշխարհակալութենէն քիչ ժամանակ յետոյ Բարելոնի մէջ կ'գտնենք Բերոսոսը, Տիւրոսի մէջ Մինանդրը, Եգիպտոսի մէջ Մանեթոնը, որոնց իւրաքանչիւրը իր հայրենիքին տարեգրութիւններուն հաւաքածոն կը շինէ նախնական յիշատակարաններուն համաձայն։ Նշանակելի իրողութիւն մըն է ուրեմն, թէ Աղեքսանդրի արեւելք անցնելէն քիչ ժամանակ յետոյ կ'տեսնենք որ յունարէն լեզուն օտար ծագում ունեցող մատենագիրներէ կը մշա-

կուրի և այդ ժամանակին մէջ ի զուր կ'փնտռես Յոյն մը որ օտար լեզուով խմբագրած ըլլայ գործեր:

Մակեդոնական աշխարհակալութենէն քիչ ետքն էր որ յունարէնի գործածութիւնը սկսաւ տարածուիլ Արեւելքի մէջ: Յորմէ հետէ մուտ գործեց յունարէնը Ասիոյ և Ափրիկէի երկրագունդերուն մէջ, խեղդեց նա, եթէ կարելի է այսդէս ըսել, վեց դարերու ընթացքի մը մէջ սեմական հանճարը, որ հրաժարեցաւ, կ'ըսէ Ռընան, իր անհատականութենէն՝ ենթարկուելու համար Յունաստանի աղղեցութեան: Բայց իսլամութեան երեւումին ատեն, սեմական տարրը յանկարծ արթնցաւ, և ա'յնքան զարգացաւ, որ իր կարգին նըսեմացուց հելլենականութիւնն ու ամբողջովին ինքզինքը գերծ պահեց հնդեւրոպական բոլոր աղղեցութիւններէն: Եւ սակայն, բայց արաբական գրականութենէն, արեւմտեան Ասիոյ բոլոր գրականութիւնները, ինչպէս ասորական, հայկական, վրացի, ղալտի, եթովպական, քրիստոնէական կրօնքէն անբաժան եղող յունական աղղեցութեան դրոշմը կ'կրեն:

Հայերը կանուխէն ծանօթացան Հելլենական գիտութեան Ասորիներու միջոցաւ, որոնք յաջողեցան նոյն իսկ ներմուծել զայն Պարսից և հուսկ ապա Արաբներու մէջ: Բայց Հայաստանը, որ քրիստոնէայ եղած էր, պարսկաստանէն աւելի խորապէս կրեց Ասորիներուն աղղեցութիւնը, որոնց լեզուն, ժամանակ մը՝ Արարատի ժողովուրդներուն մէջ, նուիրական բարբառի մը դերն ունեցաւ: Արդարեւ Արարատի թագաւորութեան օրով երբ քրիստոնէութիւնը մուտ գործեց Հայաստանի մէջ, Հայ կղերին մեծամասնութիւնը ասորի քահանաներէ կ'ըսողականար, և Աստուածաշունչի հայերէն թարգմանութիւնները և եկեղեցական գրչխաւոր գործերը նախապէս ասորերէրի վըրայ խմբագրուեցան: Բայց եթէ Արարտէրէն գաւառաբարբառը յաջողեցաւ մամաւնակ մը հելլենականութեան տեղը բռնել Հայաստանի մէջ, յունարէնի ուսուցմը քիչ ատենէն պերապոնցեց զայն, և

ազգային կղերականութիւնը Կ. Պոլսոյ եկեղեցւոյն և Կեսարիոյ եպիսկոպոսին պաշտպանութեանը տակ դնելով ինքզինքը՝ լքեց ասորական ուսումները, յունական ուսումներուն նախապատուութիւն տալու համար: Ասորի այն քահանաները որ Հայաստանի վանքերուն մէջ կը բնակէին պարտաւորուեցան տեղի տալ, և վանքերուն մեծաւորները, որոնցմէ ոմանք ասորի էին, հայ եպիսկոպոսներով փոխանակուեցան: Եփեսոսի ժողովին գումարումը կ'իշխէ թէ վճռական շարժառիթն եղած է այն հակաղղեցութեան որ կատարուեցաւ Հայաստանի մէջ Ասորիներուն դէմ: Այդ ժամանակ Ս. Սահակ հայրապետ և Մեսրոպ այդ ժողովին հայրերէն յունարէն Աստուծաշունչ մը ընդունեցին որ անմիջապէս թարգմանուեցաւ, որպէսզի սրբագրուին ասորականին վրայ կատարուած առաջին թարգմանութեան թերութիւնները: Այս սրբագրան թելադրեց Ս. Սահակը որ Մեսրոպի աշակերտներէն երկու հօգի Աղէքսանդրիա ղրկէ յունարէնը սորվելու համար: Հինգերորդ դարուն, Եգիպտոս, Կ. Պոլիս և Աթէնք զացող աշակերտներուն թիւը նշանակելի կերպով աճեցաւ, և ահա այդ ճամբորդներն են որ իրենց հայրենիքը վերադառնալով «թարգմանիչներու կամ մեկնիչներու նշանաւոր դպրոցին» հիմերը դրին, որ այնքան կենդանի լոյսով մը փայլեցաւ մինչև 2-րդ դարուն սկիզբը:

Բնագիրներու խորունկ քննութիւնը կը ցուցնէ թէ հելլենականութիւնը, կամ լաւ ևս է ըսել, հայոց ծանօթութիւնը յունական դպրութեանց գիտութեան, նոյն դարու մատենագիրներուն քով իրենց տարրեր ձեւերով իր աղղեցութիւնը զգալի բրաւ: Այսպէս, Մովսէս Խորենացի, Գիւտ և Դաւիթ Անհաղթ՝ որոնցմէ իւրաքանչիւրը տարրեր մէթոս մը ընտրած է իր հելլենական ծանօթութիւններուն գործածութեան մէջ, և ա'յս է պատճառը որ դպրոցին այս պետերը և իրենց աշակերտներն երեք որոշ խումբերու կ'ըստմունքն, 1⁰ թարգմանիչները՝ որոնց ոճը հայերէն է,

բոյց որուն բացատրութեան բառերը յունարէն լեզուի ոգիին յարմարցուած առումով մը առնուած են . 20 Անոնք որ կը գործածեն յոյն դարձուածներ , և այսպէս առաջին պատեհութեամբ զժողովրդներէն կ'ընեն իրենց ոճը . 30 Վերջապէս անոնք որ թէ՛ կ'գործածեն հելլենական լեզուի ոգւոյն յատուկ դարձուածները , և թէ՛ ընդունած են նաև յունական համաձայնութիւնը :

Այն գիտուններէն ոմանք , որոնք իրենց գրական դաստիարակութիւնը Յունաստանի մէջ առած են , երբ իրենց հայրենիքը վերադարձան , այնքան սաստիկ հիացողներ էին յոյն ոճին , որ նոյն իսկ ուղեցին Դիոնէսիոս Թրակացիին քերականութեան կանոնները պատշաճեցնել հայերէն լեզուին . այնպէս որ այդ գործին թարգմանութեանը մէջ կ'գտնենք բարդ բառեր , ճշմարիտ նորարանութիւններ , բոլորովին օտար Հայերէնի քերականական կանոններուն ու իր լծորդութիւններուն :

Յայտնի չէ թէ թարգմանիչներուն միջոցաւ հայերէն լեզուի մէջ ներմուծուած եղանակաւորումները և փոփոխութիւնները սիրով ընդունուեցան իրենց ժամանակակիցներէն , բայց սա ստոյգ է թէ՛ առանց միակերպութեան այս բոլորովին նոր ոճը , որ չէր հասկցուած ժողովուրդէն , չատ կանուխէն մերժուեցաւ , վասնորի բոլորովին անհետացաւ նա թարգմանիչներու դարէն վերջ : Ասկից զատ , Մովսէս Խորենացի մեղի խորհիլ կուտայ թէ իր և իր ընկերներուն կողմէ ներմուծուած նորութիւնները , հայերէն ոճին մէջ՝ ընդհանրապէս քիչ ճաշակուած են , վասնորի նա կը գտնուատի թէ իր ազգակիցները քիչ կարեւորութիւն կուտան թարգմանիչներու գիտութեան ու կ'արհամարհեն իրենց հմտութիւնը :

Թէպէտև Յ. ռդ դարը զերազանցապէս թարգմանիչներուն ոսկեդարն ըլլայ , սակայն Հայերը բոլորովին լքած չեն թուիր յաջորդ դարերուն մէջ , յոյն գիրքերու թարգմանութեանց աւանդութիւնը : Դար մը վերջ , կ'գտնենք Սարգիսը , որ թարգմանեց Յուլիանոս Ալեքսանդրացիին գոր-

ծերը , Փիլոն վարդապետը որուն պարտինք Սոկրատի եկեղեցական պատմութեան թարգմանութիւնը , զոր չարունակեց մինչև (Հայաստանի կառավարիչ) Ներսէս Կամսարական պատրիկին ատենը : Ընդդարուն կը յիշատակուի Ստեփաննոս Սիւնեցի , յոյն հայրերու բազմաթիւ թարգմանութեանց հեղինակը , և որ իր ուսումը կատարելագործած է Կ. Պոլիս , ուր երկար ատեն մնացած էր : Վերջապէս ԺԱ. ռդ դարուն , Գրիգոր Մագիստրոս իշխանը որ Միջագետքի դուքս տիտղոսն ստացաւ Յոյներէն , և որ նախնական բնագիրներու վրայ թարգմանեց Եւկլիտեսի երկրաչափական տարիքը , և Պղատոնի Տիմէի և Փիթոգորի սրամաթիստութիւնը :

Կրօնական և եկեղեցական պաշտամունքի վերաբերող գիրքերը , Արեւելեան եկեղեցիներու Հայրերուն գործերը , կ'կազմեն հին թարգմանիչներու աշխատութեան գլխաւոր ամբողջութիւնը , սակայն հայերը գիտական ու արտաքին գործերն ալ զանց չըրին , և իրենց գրականութեան մէջ կը գտնուին Յունաց չափազիտութեան և փիլիսոփայութեան գիրքերու թարգմանութիւններ : Նոյն իսկ կ'երեւի թէ անոնք թարգմանեցին Հոմերոսը , վասնորի Բարիդի կայս . մատենադարձը բառարան մը ունի որ կրնայ Իլիականի ընտրելի հասկացողութեանը համար գործածուիլ : Նաև հատակոսոր մըն ալ կայ , զժբախտաբար խիստ կարճ , Եւրիպիդէսի մէկ ողբերգութենէն որուն յունարէնը կորսուած է : Դիտենք նաև թէ Հայերը՝ Մենանդրի կատակերգութիւնները թարգմանած էին , որոնցմէ մէկը յիշատակուած է Դաւիթ փիլիսոփայի Արիստոտելի Ստորոգութեանց յառաջաբանին մէջ :

Դուրեց յանդգնութիւն պիտի ըլլայ հաստատել , ինչպէս որ կը պնդեն քննադատներէն ոմանք , թէ Մովսէս Խորենացիի յիշած յոյն պատմիչները , որոնցմէ նոյն իսկ հատուածներ պահած է իր պատմութեան մէջ , երբեմն թարգմանուած ըլլան հայերէն լեզուով , սակայն աւելի բնական է ենթադրել թէ այս մատենագիրը , որ այնքան բարձր աստիճանով մը հելլենական

լեզուին հմուտ էր, պարզապէս նախնա-
կան քնազիրներու դիմած է: Սակայն և
այնպէս, եթէ մեր ծանօթութիւններու
արդի վիճակով, անկարելի է մեզ ըսել
թէ Հերոդոտոսի, Արիւստոսի, Կեփաղի-
ոնի, Պաղեփատոսի, Մանեթոնի, Յուլիոս
Ափրիկեցւոյն և այլնի գործերը, երբեմն
հայերէնով գոյութիւն ունեցած ըլլան,
կրնանք հաստատել թէ արժանահաւատ
մատենագիրներու վկայութեան համաձայն
հայերը Բերոսոսի թարգմանութիւն մը
ունէին զեռ ԺԲ. րդ դարուն, և այսօր իսկ
Թէոդորոս Սիկիլիացիի (հայերէն) մէկ ձե-
ռագիրին ետեւէն են, զոր բարերաստիկ
դիպուած մը պաշտպանած պիտի ըլլար
մինչև այսօր, այն հրկիզութեանց և աւե-
րումներու դէմ որոնց թատր եղած է Ան-
դրկովկասը մինչև ԺԸ րդ դարուն վերջը:

Թղթ. Վ. Բ. Լաճկուտ
ՊԱՐՈՆԻ ՎԱՐԴԱՊԵՏ

Նալը Գաթու

ԱՐԵՒԵԼՔԻ

ԵՒ

ԱՐԵՒՍՈՒՏՔԻ ՀՈԳԻՆ

(ՎԵՐՋՍԱՄՆ ԾՈՎՈՒ ՎՐԱՅ)

Պէյրուքեմ մեկնող Լոյսի մեկ շոգեմալին մեջ:

Նորէն ծովուն վրայ:— Հեռաւոր ծո-
վեզրին վրայ ուսկից նաւը կը հեռանայ
չոգեպինդ, սուրիական մեծահարուստ
մայրաքաղաքը կը յարկաբարդուի իր պատ-
կառելի նաւահանգիստով, իր դեղնաներկ,
կապտաներկ, կանաչաներկ տուներով և իր
արեւելեան հսկայ կամարակապեայ ճեմն-
ւիքներով:

Այս վերջին շաբաթներուն այցելած տե-
ղերս արագընթաց համայնապատկերով մը
առջեւէս կը տողանցուին: Լիբանանը, Պա-
ալպէքը, Անդր-Լիբանանը, Դամասկոսը և
Սուրիոյ ծովեզրը, Պէյրութէն մինչև Կար-
մէզոս: Սուրբ Նրկիրը ծածանուտ գիծ մէ-
սլ, որ խոյս կուտայ ծովուն վրայ չոգե-
նաւի պտուտակին իւրաքանչիւր չափնին
հետ, և իմ վերջին ակնարկս պիտի ուզէր
անգամ մընալ ըմբոյնել առաւօտեան բո-

լոր այն գեղեցիկ ձիազնացքը ծովի ա-
լիքին որրերգող չափականութիւնովը, այն
գողգոջուն քառարչաւները ծովեզրներու
վրայ կոհակներու սատափեայ ծոցին մէջ,
և այն դանդաղ վերելքը դէպի կապոյտ
գմբէթները Գալիլիայի, ուր մանիչակա-
գոյն հրիկները և սևամիջուկ շուշանները
կը ծաղկին մինչև լեռներու գագաթը...:
Բայց տեսնուող իրերու պատկերները զա-
ղափարներու մէջ կը խտանան: Արեւելքի
մէջ իմ ունեցած բոլոր ճամբորդութիւնս
կ'ամփոփուի հիմա միաքիս մէջ քանի մը
զիծերով: Տպաւորութիւն մը կը տիրա-
պետէ բոլոր միւսներուն, անդունդն է որ
Արեւելքի հոգին կը դատէ Արեւմուտքի
հոգիէն:

Կարելի չէ ուրանալ որ Ափրիկէի և Ա-
սիայի թափառական ցեղերը ճակատուն
վրայ կը կրեն լոյսի կէտ մը, Աստուծոյ
մատին խորհրդաւոր նշանը: Իրենց աւե-
լորդապաշտութիւններուն և մոլութիւն-
ներուն տակ խորապէս սոգէտ՝ անոնք ոչ
նուազ ունին նաեւ նրբին պաշտամունքը
այն աստուածային աշխարհին՝ որուն ցա-
ւազին հայրենարազմութիւնն ունինք մենք:
Անչիջելի ջերմութեան թեւով մը անոնք
կը պաշտեն առանց ըմբռնելու՝ սուրբ տե-
ղերը և սրբազան խորհրդանշանները: Ի-
րենց պաշտամունքներուն և երազանքնե-
րուն մէջ անոնք ազօտ կերպով կը փնտռեն
վերջնական ներդաշնակութիւնը, ամբող-
ջական ճշմարտութիւնը որոնց մարդարեւ-
կան հաստատութիւնը կը քնանայ հին սրբ-
բարաններու մէջ: Ասոր համար է որ կարծես
սփռուած մեծ լոյս մը կայ այս անշարժ
հոգիներու մէջ: Մանուկներու նախնական
հոգիներն են ասոնք, հաւատքի և սպասումի
հոգիներ:

Ո՛րքան տարբեր են մեր ծայրահեղ ու
գերարժարժ քաղաքակրթութեան կրկի-
րները, մեր Արեւմուտքի տնդոտ ժողո-
վուրդը, իրենց փարսաներով, դիտարան-
ներով, ահաւոր ամբոցներով, մահացնող
թնդանօթներով և իրենց ուղեմաշ գործա-
րաններով, զրահապատ նաւերով և իրենց
վալաշարժներով, ուր ջուրն ու կրակը

դուգակից թշնամիներ, կ'աշխատին մռնչելով մարդուն ձեռքին տակ: Ո՞րքան տարբեր են երբեմնի իմաստուններէն մեր գիտունները՝ իրենց նրբին տարրաբանութիւնով և վայրագ կենդանաճութիւնով: Ա՛հ, ստուգիւ, Յարէթի ամբողջ այս ցեղը իր ձեռքին մէջ կը կրէ Պրոմէթէոսի ջահը, և իր ճակատը կը ցցուի կարմիր բոցերով, յանդուգն նշանը Արուսեակի՝ որ կ'արհամարհէ Տիեզերքն ու Աստուած նոյն իսկ: Բայց ասով չխաբուինք, Յարէթի այս ցեղը իր դէմքին վրայ կը կրէ նաեւ միջին ստուերը, սեւ կնճիռ մը, Սատանի նշան, այսինքն հպարտութիւնը մեծ ժխտողին որ չգիտեր սիրել, վասնզի դադրած է հաւատալէ և չհաւատար վասնզի դադրած է տեսնելէ Աստուածայինը Հոգիին աչքերով, ան՝ որուն սիրտը կրծուած է և ինքն իր դէմ բաժնուած, նայուածքը խորտակիչ նախադձէն միթագնած և սիրտը ջլատուած թաքուն մոլեգնութիւնէն՝ որ վրէժխնդիր է բոլոր դէշ կիրքերու:

Այո՛, արդի Արուսեակը նուաճուած նիւթի բոլոր դօրութիւններով չըջապատուած, բայց Հոգիին երկնային կարողութիւններէն մերկացած, այսօր իր գիւտերուն և իր անողոք ոգիին ծանրութեան տակ ջախջախուածի պէս է:

Արեւելքի և Արեւմուտքի Հոգիներ, որ ճշմարտութեան երկու բեկունքներ կը ցուցնէք, կ'ըրբ արդեօք պիտի որոշէիք իրարու մէջ նայիլ: Կը լսեմ որ Արեւմուտքի հոգին կ'ըսէ իր քրոջ. «Թո՛ղ դմեղ, քու հաւատքդ մեռած է, դու ալ փոշի մ'ես լոկ, ի՛մս է ապագան»: Ու Արեւելքի հոգին կը պատասխանէ, «Գնա՛ միշտ, քու գիտութիւնդ անիծուած է, անձնասպանութեան կ'առաջնորդէ ան, Յաւիտենականին մէջն է իմ խաղաղութիւնը»: Ու ես պիտի ըսէի անոնց, «Ինչո՞ւ համար այսպէս չէք ճանչնար զիրար: Ձանացէք և համարձակեցէք զիտել աւելի հեռուն հակառակորդին մէջ և նոյն իսկ դուք ձեր մէջ: Հաւատացեալներ, դուք դեռ բաւականաչափ հաւատք չունիք, բանապաշտներ, դուք դեռ ձեր բանականութեան վախճանին հասած չէք: Սուրբ Թովմաս Ագուի-

նացի ըսած է. «Հաւատքը միտքին արիութիւնն է որ դէպի առաջ կը խոյանայ, վստահ՝ ճշմարտութիւնը պահելու»: Հիանալի խօսք, զոր կը պահանջեն բոլոր ազատ մտածումներն ու բոլոր ազատ հաւատքները: Եւ մեր օրերուն Գլոս Պէրնար գոչած է, «Ես վստահ եմ որ օր մը բնակօսը, բանաստեղծն ու իմաստասէրը պիտի խօսին նոյն լեզուն և ամէնքն ալ զիրար պիտի հասկնան: Կամ ճշմարտութիւնը մէկ է և կամ գոյութիւն չունի: Գիտակցութիւնը միայն Գիտակցութիւնով կը լուսաւորուի և կը բացասուի և առանց անոր ուրիշ բան չէ՝ բայց եթէ ուժանակ մը կոյրի մը բուռնցքին մէջ: Գիտակցութիւնը որ է Իմաստութիւնը, կը ճառագայթէ Սէրը, և ճշմարիտ Սէրը կը ծնի Լոյսը: Թերեւս օր մը զայդ պիտի գիտնաք, Արեւելքի և Արեւմուտքի հոգիներ, թշնամի մայրեր, որ ձեր զաւակներուն փրկութիւնը իրարմով միայն պիտի կրնաք գտնել:

Ոմանք կը պնդեն որ Հասարակ պուտտայական սրբարանը Թիպէթի մէջ և լաւ ևս Ագարթալի պրահմանեան սրբարանը Հնդկաստանի մէջ, որոնց խորը Եւրոպացիները չեն թափանցեր երբեք, չատ հին ու չատ թանկագին իմաստութիւն մը պահպանուած ու նախանձով պահուած է: Չեմ գիտեր թէ ատիկա ճշմարիտ է, բայց հաւանական է որ եթէ Եւրոպան գիտնայ խօսիլ անոր հետ Ասիան պիտի գիտնայ անոր պատասխանել այս սրբարաններով: Սա յայտնի է որ արեւմտեան արդի գիտութիւնը որ չէ լուսաւորուած Հոգիին բարձրագոյն կարողութիւններով և զուտ Միտքին իմացական սկզբունքներով, հակառակ իր նիւթական բարիքներուն, անկարող կ'զգայ ինքզինքը միսթարելու անհատը ինչպէս նաեւ կազմակերպելու ընկերութիւնը:

Միւս կողմէն, անոնք որ պիտի պահանջէին ունէ յայտնութիւն, քրիստոնեայ բոլոր զաւանանքներէն կազմուած կղերներէն, կղերներ աւելի նախապաշարուած իրենց մենաշնորհներով քան աշխարհը յուզող խնդիրներով, իրենց համար դառն

յուսակապութիւն մը պիտի վերապահէին : Ուրիշ բան պիտի չգտնեն բայց եթէ չոր աւանդութիւն մը, մեռած տառ մը, հակասական հրամանակարգութիւններ, հետքեր մաշելով անգոր դարձած ծէսեր, նիւթական խորհրդանշաններ զուրկ զլրենք ստեղծող հոգիէն : Ոսկրոտիներ որոնք կրկին մտաւորութեամբ և վերապրելու համար կ'սպասեն նոր Եզեկիէի մը չունենին : Իրաւքնէ խնդիրը միայն Եւրոպայի ամբողջական վերածնունդին մէջ է իմացական և հոգեւոր բարենորոգումով մը : Անոնց որոնք կը կարծեն թէ ընկերութիւն մը կրնայ վերանորոգուիլ զուտ քաղաքական գործով մը կամ քաճանայապետական վրճիռներով, պէտք պիտի ըլլար պատասխանել խօսքովը փայլալինացայտ հրեշտակին՝ զոր Մաղթաղենացի Մարիամը տեսաւ Քրիստոսի պարսպ գերեզմանին մէջ, «Յարեա՛ւ, չէ՛ աստ» :

* *

Բայց արդէն Պէյրութի յորձանքը և ձիւնապատ Լիբանանի չղթան կ'անհետանան նաւին հետքին ետեւ... Ըոյժ անհուշութիւնը կը համագրաւէ հորիզոնը, մենք այդ ընդարձակութեան մէջ կը թաւալինք... և ամբողջ Արեւելքը ալ երազ մ'է լոկ :—Մնաք բարո՛վ ուրեմն, ո՛վ չէ՛կ Եզիպտոս, վաղեմի խորհրդագրութեան երկիր, և զու ո՛վ մարմարեայ Յունաստան, սիրտիս սիրելի, Գեղեցկութեան նուիրական երկիր, և զո՛ւն ալ, ո՛վ տըխուր Պաղեստին, վրայէդ անցնող աստուածային սարսուռէն զեռ տօգոյն : Ուրիշ չատերէ վերջ ե՛ս ալ եկայ խմելու ձեր աղբիւրներէն և նորոգ ուժաւորուելու ձեր տաճարներուն մէջ : Զձեզ ա՛լ պիտի չտեսնեմ... Իմ ճամբաս դէպի Արեւմուտք կ'երթայ, դէպի նոր երկիրները, դէպի ապագան, որ անցեալին կատարումը պիտի ըլլայ : Ծանօթ և անծանօթ եղբայրներ կեանքի պայքարին կը վերակոչեն զիս : Պարտականութեանս կատարումէն առաջ թէ իսկ ուժերուս տկարանալը և ընկճուելը տեսնեմ, զձեզ պիտի չմոռնամ : Կանխաւ ձեր մէջ նկատեցի խոստացուած երկիրները : Դուք իմ մէջս արծարծեցիք ինչ որ իմ փափաքս կը փնտռէր ձեր մէջ :

Թէփէի, Երեսիսի և Երուսաղէմի երրորդութիւնը Գիտութեան, Արուեստի և Կրօնքի յաւիտենական երրորդութիւնը չէ՛ր միթէ, ձուլուած ու կերպարանափոխուած ամբողջական կեանքին մէջ :

Երեք ճամբաներ քերած անցած եմ : Թող ուրիշներ հոն քալեն ազատօրէն, և ես վստահ եմ որ անոնք իրարու պիտի հանդիպին նոյն գագաթին վրայ :

Այսօր աւելի քան երբեք «հոգին կը փչէ ուր որ կ'ուզէ» : Ամէն բանէ առաջ, իւրաքանչիւր ցեղ, իւրաքանչիւր ժողովուրդ, իւրաքանչիւր մարդ պէտք է փնտռէ ի՛ր իսկ մէջ իր Արեւելքն ու Արեւմուտքը, երկիրը՝ ուսկից կուգայ և երկիրքը՝ ուր կ'երթայ : Այն ատեն միայն գտած ըլլալով Հոգիին Արեւելքը, մենք պիտի կրնանք գոչել ասուգութեամբ, դառնալով դէպի մեր մոլորակին Արեւելք, տիեզերական կրօնքին նախասահմանեալ որրանը և ապագային խորհրդաւոր բանալին . Ex Oriente Lux! (Լոյսը Արեւելքէն) :

Ed. Schuré
(Sanctuaires d'Orient)

Թրգմ.

ՀՐԱՆՏ ՍՏՄՈՒԷԼ

Ո Ւ Ղ Ղ Ե Լ Ի Ք

- յէջ 68, տող 12. ծագումնունցող, կարդա՛, ծագումնունենալով .
- յէջ 68, տող 26-27. հանգամանք մը և յայդնի աղբիւր մ'ալ չունին, կարդա՛, հանգամանք մը չունին, յայտնի աղբիւր մը ունենալով հանդերձ :
- յէջ 69, Գ. կանոնի մէջ, խաւարս, կարդա՛, ունդա :
- յէջ 69, Թ. կանոնի մէջ, նուիրանաճն ժողովելոց, կարդա՛, նուիրանացի եղելոց :
- յէջ 69, (1) ծանօթութեան մէջ, բառական, կարդա՛ տառական :
- յէջ 104, ԼԶ. կանոնին մէջ, երկիցս ժողովուրդեանն, կարդա՛, ժողովուրդեանն :
- յէջ 105, ԽԱ. կանոնին մէջ, իւրովի թոշակօք կարդա՛, իւրովք թոշակօք :
- յէջ 105, (***) ծանօթութեան մէջ, կանոնադիրքին մէջ կարդա՛ Կանոնադիրքերուն մէջ :
- յէջ 136 (**) ծանօթութեան մէջ, Յ. յիմարդ կարդա՛, Զ. յիմարդ :
- յէջ 137, ՀԳ. կանոնին մէջ, պատուհասին, կարդա՛, պատուհասի :
- յէջ 137, ՀԴ. կանոնին մէջ, զուամբէ կարդա՛ զիմբէ :
- յէջ 137, ՀԹ. կանոնին մէջ, վերջին եղիցի թատիկն քով աւելցնել, (ժառանգաւոր) :

Ս. ԳՐԱԿԱՆ

ԲԱՌԱՐԱՆ

Ս. ԳՐՈՅ ԲՆԱՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԲՈՅՍԵՐԸ

ԳԻՆՁ (= Գինձի սերմ).— (Ելից. ԺՁ. 31) Եբր. *kas* [= gad], Յուն. *κόριον* (= ֆորիոն). Բ. Բ. *coriandrum sativum*. Տաճ. *խշնիշ* :

Ս. Գրոց Եբրայական բնագրին մէջ յիշատակուած Եբր. «կատ»ը բուսաբանութեան *coriandrum sativum* կոչուած հովանոցաւոր տունկին գնդիկաձև յարգագոյն մանր պտուղն է որ սխալմամբ սերմ կ'կարծուի : Գինձը Արևելքի մէջ ընդարձակօրէն կ'մշակուի միամեայ տունկ մըն է : Չինաստանէն տարածուած է . Միջերկրականի և զերքը կ'մշակուէր, ինչպէս ընդարձակօրէն կ'մշակուէր Եգիպտոսի մէջ շատ կանուխէն . հունար կ'ցանուի Մարտ ամսոյն մէջ . ջերմ ու համամային է . սաամոքսային փքահամ դեղ մըն է . Ափղէնիս կը հանրկայացնէ երկար ցանկ մը այս հունտին յատկութեանց և առաւելութեանց մասին . այս հունտը իբր դեղ ստէպ կը գործածուի յարեւելի ղեղադործներու և շաքարագործներու մօտ :

Ս. Գրքին մէջ կ'յիշատակուի միայն այն առթիւ երբ մանանային չափն ու գոյնը պիտի բացատրուի (Տե՛ս Ելից ԺՁ. 31. Թիւ. ԺԱ. 7) : Արարական անունն է *բուզարահ* :

ԿԵՐՊԱՍ (= Բանգակ).— (Եսթր. Ա. 6). Եբր. *karpos* [= carpas]. Յուն. *κάρπας* (ֆարպասու). Բ. Բ. *cosypium herbaceum* (= խոտակերպ բանգակներ) :

Եբր. *karpos* բառը փոխառեալ բառ մըն է Սանս . Բարքա՛զա — «բամպակ» — Պարսկերէն Բիւրպա — «նուրբ կտաւ» — բառերէն : Հայերէնն ալ Յունարէնի և Լատիներէնին պէս պարսկերէնէ փոխառեալ կ'ընկաւորուի :

Բամպակը Հնդկական բոյս մըն է . Հինդ-

կաստանէն մտցուած է Պաղեստին . այժմ Պաղեստինի մէջ ընդարձակօրէն կ'մշակուի . այս բամպակէն կ'չատրասուէր քուր, մանաւանդ կանանց, հանդերձեղէնները : Ի սկզբան, ինչպէս կ'երևի Հին և Նոր Կրտակարաններէն սրբազան մատենագիրներու անձանցիք էր բամպակը այլ միայն ծանօթ էր բամպակէն պատրաստուած կերպասեղէնները . Ասուերոսի պաշտօնը սարքուած էր ոսկիթիւ և փայլուն կերպասեղէններէ (Եսթր. Ա. 6) :

Բանգակը [= *cosypium herbaceum*] բարձր տունկ մըն է և շատ կամ քիչ ոստերով ուղղաձիգ ցօլուն մ'ունի . աժգոյն դեղին մոլոշի ծաղիկներ կ'բուսնի . պտուղը կաղինի մեծութեամբ հաւկիթաձև սրածայր, բազմաթիւ սերմեր կ'պարունակէ . այս սերմերը երկայն փայլուն ճիւղմակ մազերով (բամպակով) ծածկուած են, պտուղի հասուննալուն առեն այս արտագոյ կարգի առաձգական մազերը կը տարածուին և պտուղը կ'բացուի :

ՀԱՅԻ.— (Ես. ԽԻ. 14). Եբր. *orek* [= oren] Յուն. *ορέκ* (= օրէքա). Բ. Բ. *Fraxinus excelsior* (= բարձրաբուն հացի) *Fraxinus ornus* (= Գազպինալեր հացի) . Տաճ. *սիլ պուսաֆ աղանը* .

Եբր. բնագրին մէջ միանգամ և եթ յիշատակուած է . այս ծառին փայտէն կուռքեր կ'չինուէր . Պաղեստինի մէջ հասարակ հացին ծանօթ չէ . Պաղեստինի ոչ մէկ կողմը այդ ծառը չ'երևիր . աւելի Սուրիոյ մէջ կ'տեսնուի և երեք տեսակ հացի կայ . 1⁰. *Fraxinus ornus* որ կ'աճի Լիւանանէն մինչև դէպի Սուրիոյ հարաւակողմը Ամանոս լեռանց վրայ . 2⁰. *Fraxinus excelsior* Ամանոսի և դէպի հիւսիսի կողմի լեռանց վրայ . Իսկ 3⁰. *Fraxinus oxycarpa* Դէլլ — էլ — Դատիէն (= Կանէն) դէպի Անտի Լիւանանու կողմանց վրայ :

1⁰. *Fraxinus ornus* (= վայրի Գազպինալեր հացի) . հինգ թուով մատնաձև բաժնուած տերեւներ և գաղաթին վրայ հաստ,

ճերմակ անուշահոտ ծաղիկներով փուշեր ունի. ծառին կարծրացած չաքարալից հիւթը (Պազպեն, մաննա) իրբեղեղ կ'գործածուի, այս զազպինարեր հացին հարսւլային խաւիոյ մէջ շատ կ'անկեն. ամէն տարի ծառին վրայ ծակեր կ'ընան որմէ գորշ հիւթ մը կ'վազէ և քանի մը ժամ ետքը ճերմակ գոյն մը կ'առնուի:

2⁰. Fraxinus excelsior (= բարձրաբուն հացի). — մոխրագոյն գորշ, ողորկ կեղևներ ունի. այս կեղևները կ'ճեղքուին ու կ'ճաթուտին երբ ծառը ծերանայ. հակադիր տերեւները 9 — 15 թուով անհաւասար մասնաձև մասերու բաժնուած են. ձիթաբեր ծառերու ամէն յատկութիւններն ունի. միայն պտուղները թեւաւոր (թեւապտուղ) են: Ընտրելու ծառ մըն է. 15 — 45 տարեքան բուն մ'ունի. անտառներու մէջ խիստ ցանցաւորէն կերելի. աւելի առանձինն կ'մշակուի:

3⁰. fraxinus oxycarpa. հացիին երրորդ տեսակը. աւելի կերելի ուշագրաւ կերպով Դէլ — Էլ — Գառիէն դէպի Անդի — Լիրանանու լեռանց վրայ.

Եսայ. ԽԴ. 15 համարին նկարագրութեան կ'հետեւան թէ ակնարկուած ծառը — օրեւ — անտառի ծառերէն չէ. վաւերի անտառի ծառերու կարգին մէջ չը գտնուի. Եսայի ընտանի ծառ մ'ըլլալը կ'յայտնէ. կ'ընորոշէ անկուելիք և մըշակուելիք ծառ մ'ըլլալը. Սուրիոյ և Պաղեստինի ինչպէս ապաւանդուած Արաբիոյ մէջ մշակուելիք միակ ծառը կայ՝ այն ալ արաբական aran (= արան) ծառն է որ Երբայական օրեն (= օրեն) ծառը ըլլալու է ամենայն հաւանականութեամբ այսինքն է հացին:

ՈՐՈՄ. (= ժանսահոս խոտ) = ժանսխոտ. (Յոբ. ԼԱ. 40). Եբր. պոշախ [= bōshah]. Յուն. βίτος (= բարոս):

Եբր Պոշախ բառին արմատը պօշ, ժանսահոսութիւն կ'նշանակէ. — պոշախ կ'թարգմանուի «ժանտահոտ խոտ» կամ «ժանտախոտ». սխալ է թարգմանել որով. (սխալ է կարգին ՈՐՈՄ բառը). Եթեանամիցը Եբրայական պոշախն թարգմանած է «մորենի». ինչ որ սխալ է. եթէ Եբրայական

բառը մեկնել ըլլար կրնար «մորենի» թարգմանուիլ: Սրբ խնդիր է գիտնալ թէ «ժանտահոտ խոտ» ըլլալով ո՞ր խոտը պիտի հասկնանք. անշուշտ այդ խոտը պիտի ըլլայ մին այն ժանտահոտ խոտերէն որոնք կ'երևին Սուրբ Երկրին մէջ. այս ժանտահոտ խոտերէն ամենէն ուշագրաւ և իր խիստ զարչանոտութեամբ և թմրեցուցիչ յատկութեամբ ծանօթ է Datura stramonium (= ժանդնկոյդ)ն է. հետեւաբար Յոբայ ԼԱ. 40 համարին մէջ յիշատակուած Եբրայական պոշախ բառը՝ «ԺԱՆՏԱԽՈՏ» թարգմանել ճիշտ է. ժանտախոտ ըսելով պիտի հասկնանք բուսականութեան մէջ յիշուած «ժանս ընկոյզ»ը:

Եբրայական Պոշախ բառին արմատն ածանցեալ բառի մը ևս կ'հանդիպինք Եսայ. Ե. 2, 4 համարներուն մէջ. այդ ածանցեալ բառն է պե'ուշիմ [= Bē'ūshim] որ Հայ. գրաբար աստուածաշուքին մէջ «փուշ» իսկ աշխարհաբարին մէջ «աղու», և սրբազրուած գրաբարին մէջ «խաղող վալրի» թարգմանուած է: Եթէ Եսայ. Ե. 5, 6, 7 համարները կարդանք, ինչպէս և բառին ստուգաբանութեան իրազէկ ըլլանք պիտի համոզուինք թէ պե'ուշիմ չէ կարելի թարգմանել ո՛չ փուշ, ո՛չ աղու, և ո՛չ վալրի խաղող. պե'ուշիմ բառով կ'ակնարկուի այնպիսի տունկի մը որ նման ըլլայ ողկոյզներով որթին և այգիներու մէջ բուսելիք — իբր որով ցորենի արտին մէջ — և իր ժանտահոտութեամբ ու թունաւոր յատկութեամբ ծանօթ ըլլայ: Ժանտահոտ և թունաւոր որթանման տունկերէն ծանօթ է Պաղեստինի մէջ solanum nigrumը, solanum miniatumը և solanum villosumը. արդ. ամենայն հաւանականութեամբ Եսայ. Ե. 2, 4 համարներուն մէջ յիշուած պե'ուշիմով կ'ակնարկուի այս ողկոյզաւոր տունկերէն միոյն:

Այս տունկերը ոլորի մեծութեամբ հատիկներով ողկոյզներ ունին. դիզուած քարակոյտերու վրայ նաեւ կ'բուսին և այգիներու մէջ ինչպէս մշակեալ տեղեր հասարակ են:

Ըստ այսմ Եսայիայ մէջ յիշատակուած «Պէուշիմ»ը բանաւոր է թարգմանել

«ԺԱՆՏԱՊՏՈՒՂ» փոխանակ «վառ» կամ «ազրիս» թարգմանելու, իսկ Յոբայ մէջ յիշատակուած «պօշտի» ընթերցել թարգմանել «ԺԱՆՏԱՊՏՈՒՏ» փոխանակ «որուն» կամ «անորենի» թարգմանելու:

ՂԵՆՈՆԴ Դ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

(Շարունակութիւն 5-րդ թիւին)

Համբարձում Մայր եկեղեցւոյ մէջ իր դաստիարակութիւնը շարունակելով հանդերձ Ամիրայից խնդրանք ստիպուած էր նաև այցելել Խաս գիւղ, Բերա և Ղալաթիա, որով ընդարձակեց իր գործունէութեան ստապարէզը և առիթ ունեցաւ իր բազմաթիւ հեղինակութիւնները տարածելու, որոնցմէ գլխաւորներն են, «Տիրածին կոյս» Բաստ Երւրիւք Սեմայի, որ Ս. Աստուածածնայ վրայ ներքող մ'է՝ շարադրեալ Փէշտիմալ-ճեան Գրիգոր պատուելիէ (1773—1837) . 24 տողով քերթուած մը, որոյ իւրաքանչիւր տողին ուրոյն եղանակներ ղենելով յօրինած է անմահ հեղինակը . նոյնպէս նաև «Ո՛հ, ի սկզբան պատերազմին» Պէյաթի Արապան Պէսթէն, որ Վարդանանց պատերազմին մէկ նկարագիրն է, և կը պարունակէ չորս Պէսթէ, երկու Աղբը Սեմայի և մէկ Երւրիւք Սեմայի, ամէնքն ալ իրարմէ գերազանց . ասոնցմէ վերջը կուգայ «Ո՛վ ամենապայծառ» Պէյաթի Պէսթէն՝ իւր «Համեմատ քեզ ո՛չ գոյ նման» Աղբը Սեմայիով և «Մայր անարատ» Երւրիւք Սեմայիով . «Վեհ Հմայիակ» Իւշաք երկու Պէսթէները, «Գործք քաջութեան» Աղբը Սեմայիով, «Ձարթիւր, զարթիւր» Սէնկին Սեմայիով, «Էջօրեղ բազուկն» Երւրիւք Սեմայիով, «Շուշանագեղ» Բաստ երեք Պէսթէները, «Հօտք կառապետք» Աղբը Սեմայիով, «Թշնամին զքեզ վիրաւորեաց» Հիւսէյինի երկու Պէսթէները «Աղբիւր առատ» Աղբը Սեմայիով և «Մարիամ սուրբ կոյս» Երւրիւք Սեմայիով . «Ո՛վ տիրապէս

Պէսթէնիկեար երկու Պէսթէները և «Գուլիլի, զովելի» Քեարը . զարձեալ Պէսթէնիկեար «Ահա կոյնչիմ» երկու Պէսթէները, «Ի տուն գինւոյ» Աղբը Սեմայիով և «Հոգին անքակ» Երւրիւք Սեմայիով, և ընդհանրապէս ասոնցմէ ունի նաև 20է աւելի տարբեր եղանակներով յօրինած «Յարեաւ Քրստոս այսօր» Յարութեան տաղը, և ուրիշ Մեղեդիներ և Տաղեր, որոնք մեր ձեռքը հասած չեն:

Ցաւալի է որ այս մեծ անձնաւորութեան պատկերը կամ փոքրիկ մէկ լուսանկարը չե՛նք կրցած ունենալ այսօր: Աւանդութեամբ կը պատմուի թէ Տիւգեանք ուղեւոր Նորա պատկերը գծագրել տալ, շատ կը թախանձին զՀամբարձում որ զիջանի իրենց առաջարկութեան. իսկ նա համեստութեամբ կ'ընդդիմանայ իրեն եղած այս արտասովոր պատուոյն համար, առարկելով թէ աննշան մէկու մը նկատմամբ պէտք չէ՝ որ այս առեակ յարգանքներ ընծայուին. ի վերջոյ կը յաջողին յաղթել անոր յամաւորութեանը և գծագրել կուտան անոր պատկերը . սակայն դժբախտաբար չզիտցուիր թէ այսօր ո՛ւր կրնայ զանուիլ այդ հազուագիւտ նկարը:

Այս առթիւ կոչում կրենք բոլոր «Տաճար»ի ազնիւ ընթերցողաց, որ մեծ ծաւալութիւն մը մատուցած պիտի ըլլան մեր Աղբին, եթէ կարենան ո՛ր և է միջոցաւ երևան բերել Հայ ձայնագրութեան անմահ հեղինակին պատկերը, որոյ կորուստը ըզգալի պակաս մը կը թողու ներկայ դարու մէջ:

Համբարձումի գլխաւոր աշակերտները եղած են՝ Թամպուրի Ալիքսան (1815—1864) Արիստղոմ Իւթիւճեան (1818—1847), Արիստակէս Յովհաննէսեան (1812—1878), Նէյզան Զենոր (1810—1866), Պեարոս Զեօմէլէճեան (1785—1840) և Յովհաննէս Միւհէնտիսեան (1810—1891), որոնց վրայ մանրամասնօրէն պիտի խօսինք յաջորդ գլուխներուն մէջ:

Ասոնցմէ Նէյզան Զենոր՝ ինչպէս ըսած էինք, Պապա Համբարձումի 6 զաւակներուն մէջ չորրորդ որդին էր, որ իր ամբողջ եղբարց մէջ միմիայն ինքը եղաւ հետեւող

մեծանուն հօրը արուեստին, միայն թէ փոխանակ եկեղեցական երաժշտութեան յարելու, լոկ քաղաքական մասին աշխատեցաւ և քիչ ատենի մէջ յաջողեցաւ սրնգահարութեան վարպետներէն մին հանգիստնալ իւր ցոյց տուած ճարտարութեամբ:

Անդրանիկ դուստրը Մարիամ ամուսնութեան մէջ մեռած ըլլալով ո՛ր և է ժառանգ չէ թողուցած: Երկրորդ և երրորդ որդիքը՝ Յովհաննէս ու Յովսէփ Նոյնպէս ամուսնի մնացած ըլլալով մինէն թուական չ'ըզաղէին, թէ և վերջինը բաւական վարժուած էր ջութակահարութեան և հօրը թախանձանքներէն ստիպեալ քիչ չուտ ուսած էր ձայնագրութիւնը, որով քանի մը կտոր հեղինակութիւններ ալ ունեցած է: Իսկ հինգերորդ որդին Բիւզանդ՝ որ արհեստով փամփուշտ չինող էր, բոլորովին անողատու կեանք մը կը վարէր, անուանութեան մէջ փճացնելով իր վաստակը: Գալով իր վերջին դստեր՝ Նոյնապէթի որ դուստր քանի մը տարի առաջ կ'ապրէր, ամուսնացած և Իսկուհի անուամբ աղջիկ մը ունեցած էր, որն որ միակ և վերջին չառաւիղը կը մնայ Պապա Համբարձումի գերդաստանին, վասնզի Զենոր թէ և ամուսնացած՝ բայց իւր միածին զաւակը վաղահաս մահուամբ ծովամոյն եղած էր 9 տարեկան հասակին մէջ:

Տիկին Նոյնապէթ կը պատմէ եղբի թէ իր մեծանուն հայրը նուագարաններուն մէջ նախընտրած ըլլալով թամպուրը (որով երբեմն դաս կուտայ եղբի իր տունը այցելող աշակերտաց), և Զենոր եղբայրն ալ նէյր, յաճախակի կը հրաւիրեն եղբի Զէմէքճեան Պետրոսը (առաջին աշակերտը Պապա Համբարձումի, որ մեծ անուն հանած է ջութակահարութեան մէջ) և շատ գեղեցիկ ժամանց մը կ'ունենան եղբի քեմանով, թամպուրով և նէյրով, ի մեծ ուրախութիւն թաղեցոց՝ որոնք խուռն բազմութեամբ կը լեցուին եղբի իրենց տանը առջեւ, և մինչեւ երգեցողութեանց աւարտիլը չեն ուզեր եղբի ցրուիլ: (Կենսագրութիւն Հայ երաժշտաց, Յովհաննէս Շալեան):

ԺԹ. Դարու սկիզբները դպրութիւնը

ա՛յնքան բարգաւաճեալ վիճակ մ'ունեցաւ, որ իրաւամբ կրնանք անուանել Դպրութեան Ոսկեդարը: Ամէնէն առաջ արժան կը դատենք յիշել Զէննէ (*) մանուկանեալ Պօղոս Սարկաւազը՝ (հաւ հոգելոյս Ներսէս Պատրիարքի Վարժապետեան) որ պատկառելի ներկայացուցին ու նահապետը եղաւ անցեալ դարու դրպարաց՝ իր հասուցած բազմաթիւ աշակերտներով:

Պօղոս ծնած է 1746ին և ի մանկութենէ աշակերտած է Սկիւտարի Ս. Խաչ Եկեղեցւոյ քահանաներէն Պարկեշտ մականունեալ Տ. Աբրահամ քահանային՝ (Նկարագիր երգոց, 1874. Նոյն Տնտեսան): Սա իր մանկական հասակէն մեծ սէր մ'ունենալով լեզուագիտութեան, հայերէնի մէջ ունեցած հմտութենէ զատ սորված էր նաև Յունարէն լեզուն և քիչ մըն ալ Լատիններէնը՝ բժշկութեան վերաբերեալ նախնական գիտելեաց մէջ ըրած հետազոտութեամբը, որոնց շնորհիւ կարող եղաւ լաւ ապագայ մը պատրաստել իրեն:

Զէննէ Պօղոս իրեն դիմող բազմաթիւ աշակերտները գոհացնելու համար ստիպեցաւ սենեակ մը վարձել Զինճիրլի խանի վերնաբարկը, ուր կը յաճախէին ուսանողները՝ Բարուսակ, Պօղոս և Ծանիկ ամիրայք, ինչպէս նաև եպիսկոպոսներ, վարդապետներ ու վարժապետներ լեզու սորվելու համար, իսկ իր որդին Յովհաննէս Վարժապետեան, սիրացու Պետրոս (+ 1858) Համբարձում Լիմոնճեան և Գարթալցի Յարութիւն վարժապետ Եկեղ. երաժշ. սովորելու համար, (Շար Հայ կենսագրութեանց, 1893. Աբրահամ Այվազեան): Եւ որովհետեւ Զէննէ Պօղոս հմուտ էր նաև Յունական Փսալթիքային, կ'ըսուի թէ Կիրակամոյի «Լոյս զուարթ» երգի եղանակը յունականին վրայ յարմարեցուցած և արդի եղանակը վերակազմած է:

(*) Կ'երեւայ թէ այդ մականունը տրուած է իրեն տղայութեան տե՛ն ունեցած առաջոյ կարգի ծայրին գեղեցկութեան համար, իսկ որով Զէննէ բառին Հայերէն բարգաւաճութիւնն է իզական:

Տիրացու Պողոս միանգամայն լա՛ւ գեղազիր ու գարգազիր եղաւ, որոյ մէկ քանի նկարագրող գիրերը տեսնուած են իր թուղթերէն մէկուն քով: Զէննէ Պողոս մաքուր կենցաղ մ'ունեցած ըլլալով՝ մինչեւ իր ծերութիւնը առողջ կեանք մ'ուցուց և բազմադիւն աշակերտնել, ընծայելով ազգին 80 տարեկան հասակին մէջ մեռաւ 1826ին իր խապիւղի տան մէջ:

Զէննէ Պողոսի աշակերտակից ընկերն եղած է նաև տիրացու Յովհաննէս սարկաւազ: Սա ծնած է 1755ին, և թէպէտ իր հօրմէն պարկեշտ Տ. Աբրահամէն սկսած է սորվիլ եկեղեցական երաժշտութիւնը թայց կ'ըսուի թէ շատ պղտիկ հասակին մէջ վախճանած ըլլալով իր հայրը, մեծ քրոջմէն՝ Սառայէ (որ քաջ շարականագէտ մ'էր և արժանաւոր աշակերտուհի իւր մեծանունն Հօր,) ուսած է բոլոր Շարականի երգեցողութիւնները: Յովհաննէս սարկաւազ երկար տարիներ դասատուութեան պաշտօն վարած է ի Պրուսա, ուր դեռ ևս կը պահուին իր եղանակները: Սորա աշակերտներն եղած են ի միջի այլոց Յարութիւն Սէֆէրեան և իր եղբայրը Տ. Բարթոլոմէոս քահանայ Ղալաթիոյ: Ան ալ իր հօրը պէս երկար կեանք մը ունեցաւ (*) և 90 տարեկան հասակին մեռաւ յ'Իստիւլտար 1845ին:

Գրիգոր դպիր Գապասագաւեան, որ ժամանակագրական կարգաւ ամէնէն հինն է անցեալ դարու երաժշտաց, ըստ որում ծնած է 1740ի միջոցները ի Կեսարիա: Սորա մանկութեան վրայ մինչև ցարդ չենք կրցած ո՛ր և է տեղեկութիւն մը քաղել, գիտնալու համար թէ որո՞ւ աշակերտած է և կամ ո՞չք եղած են իրեն աշակերտները. միայն իր երկու հեղինակութիւններէն հետեցուցած ենք թէ քաջահմուտ էր Յունական երաժշտութեան:

(*) Պարկեոս Տ. Աբրահամ Բահանայի ծննդեան եւ մահուան քուականները թէպէս նշուած չեն գիտեր, սակայն մեր ձեռք ձգած այլ եւ այլ գրութիւններէ կը հետեցնենք թէ նա ծնած է 1670 միջոցները, եւ գրեթէ դար մ'ապրելէ յետոյ վախճանած է շուրջ 1768 քուականին:

Ասոնցմէ առաջնոյն անունն է Գրքոյկ որ կռչի Նուագարան, 1794 ին տպուալ 'ի Կ. Պոլիս, իսկ երկրորդին՝ Գիրք Երժշտական, 1805 ին 'ի լոյս ընծայուած՝ Յովհաննէսեան Պողոսի տպարանէն:

Ստոյգն ըսելով՝ հակառակ մեր երկարատե ուսումնասիրութեան չենք կրցած որոշապէս բան մը հասկնալ ատոնցմէ, ինչպէս նաև մեզի հետ շատեր: Կ'երեւայ թէ հեղինակը ջերմ պաշտպանն է եղեր Յունական Փսալթիքային, և այդ ազդեցութեամբ տոգորուած՝ իր բոլոր ջանքը 'ի գործ դրեր է մեր խել մը հին մեղեդիները և տաղերը անոնց եղանակներուն յա՛ր և նմանն ընելու: Եթէ երբէք այդ երկու հրատարակութեանց մասին գովելի ընթացք մ'ունեցած է երկասիրողը, սա՛ է թէ ինքը միայն եղած է առաջին ու վերջին անգամ երաժշտութեան վրայ գրող և տպագրող հեղինակը:

Գրիգոր Գապասագաւեան բուսական երկարօրէն խօսած է Շարականի խաղերուն և անոնց ունեցած զօրութեան վրայ, որոնցմէ օրինակ մը մէջ կը բերենք. «ճնկներ սա ունի ձայն իմն կաքաւեցուցիչ, ծունկ, իբր թէ բարկութեամբ 'ի վերայ ծնկան ելեալ տեսանի. թուր, ունի որպէս թէ ձայն պատերազմական որ իբր զինե լ մտանէ յեղանակս»:

Ահաւասիկ այս տեսակ բացատրութիւններէ կը բաղկանան բոլոր իր գործերը, որոնցմէ լոյս մը քաղելու համար Գանիէլ մարգարէ մը ըլլալ պէտք է, որպէսզի կարենայ մեկնել «մանէ, թէկէզ, փարէս»ի պէս խորհրդաւոր բառերը: Եւ եթէ մըտածենք որ այսպիսի ճապող գրութիւններ նպատակ ունեցած են բացատրելու Շարականաց խաղերը, այսինքն արուեստ մը՝ որ գոյութիւն ունեցած է եղեր Շրնորհալիի ժամանակ և այժմ լիովին անհետացած է, ալ երևակայեցէք թէ ո՛ր տառիճան կրնանք օգտուիլ այդ Երաժշտական գիրքերէն, որոնց մէջ խնդրեալ են նմանօրինակ բացատրութիւններ:

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԳԷ. ՀԻՍՏՐԻԵԱՆ

(Շարունակելի)

ԵՎԵՐԵՑԱԿԱՆ ԵՐԱԺԱՏՈՒԹԻՒՆ

ՇԱՐԱԿԱՆԻ ԽԱԶԵՐԸ

Մեր շարականի խաղերուն վրայ մինչև հիմակ թէև բաւական բան գրուած է, բայց տակաւին չէ ճշգրտած կամ լուսաբանուած սա՛ խնդիրը թէ անոնք իրեւ ինչ կը ծառայէին հին աստեւն և թէ ինչ էր անոնց խակական արժէքը. անոնք՝ իրեւ չափի տեւողութեան նշաններ կը նկատուէին կամ երգելու կերպ մը ցուցնելու կը ծառայէին թէ, իրեւ ձայնագրութիւն՝ եղանակներ ցուցնող որոշ խաղեր էին: Այս երկու կարծիքն ալ ունեցողներ եղած են և կան. սակայն ասոնց մէջ ճիշդ բլաւ կ'ենթադրուի անոնցը՝ որոնք կ'ըսեն թէ՝ շարականի խաղերը գլխաւորաբար չափի տեւողութեան նշաններ բլաւով մէկտեղ անոնցմէ ոմանց կազմութեան բերումովն ալ միեւնոյն ատեն երգելու կերպն ալ նշաններ են: Մենք ևս այս կարծիքն ենք. ինչպէս նաև ուրիշներ, որոնց հետ կարծիքի փոխանակութիւններ ունեցած ենք այս և այլ եկեղեցա-կրօնական խնդիրներու վրայ, և որոնք նոյնպէս իրենց պաշտօնին և կարողութեան ներած չափով ուսումնասիրած են այս խնդիրը. բացատրենք թէ ինչո՛ւ:

Գիտենք թէ որ և է շարականի սկիզբը անոր ո՛ր ձայնէն բլաւը նշանակուած է. աճ. թձ. զձ. ևն. ձևին տակ. եթէ մենք այդ շարականին եղանակը նախապէս գիտցած չըլլանք, անոր որ ձայնէն եղած բլաւը գիտնալնիս բաւական պիտի չըլլայ մեզ, որպէսզի նոյն Շարականը երգենք՝ բաւերուն վրայ դրուած խաղերն ալ տեսնելով մէկտեղ. մինչդեռ եթէ ոմանց բաժին կամ կարծածին պէս նոյն խաղերը կարող ըլլային կարգադրել մեզ որ և է Շարական իր խակական եղանակով՝ այն աստեւն շարականի մը եղանակը նախապէս գիտցած ըլլալու պէտքն զգալի պիտի չըլլար, այլ խաղերը տեսածնուս պէս եղանակն ալ պիտի կարենայինք գիտնալ և երգել, մինչդեռ իրողութիւնն ասոր հա-

կառակն է: Այս պարագային մէջ յայտնի կերպով կը տեսնուի թէ անոնք (խաղերը) ոչ թէ եղանակ ցուցնող նշաններ են (որպիսին է ձայնագրութիւնը) այլ եղանակը նախապէս գիտնալով՝ երգուած շարականի մը չափին տեւողութեանը ինչպէս նաև անոր երգելու կերպին նշաններն են:

Ասկից զատ երբ պէտք եղած ուշադրութեամբ դիտենք շարականի խաղերուն դրութեան կերպը, պիտի տեսնուի և համոզուինք թէ անոնք, յիշաւի հետի են իբրեւ ձայնանիշ ծառայելէ և թէ ձայնանիշներով գրուած եղանակի մը դրութեան կերպին ու շարականի մը խաղերու դրութեան կերպին մէջ եղած աչքի զարնող և զգալի տարբերութիւնը նոյն իսկ ցոյց կուտայ սոյն երկու դրութեան կերպերու տարբերութիւնը, որով և մեր ըսածին ճշգրտութիւնը:

Օրինակ՝ խաղերու, գլխաւորաբար չափի տեւողութեան նշաններ բլաւուն: Ծաշու շարական. Յարութեան ալ.

«Թա՛գաւա՛րեա՛ց Աստուած ի վերա՛յ հե՛-
« քա՛նո՛ւս՛ց եւ լուսազա՛րդեա՛յ պայծա՛-



« քա՛նո՛ւս՛ց Սբ. զե՛կեղեցի՛, ժողո՛ւփո՛ւրդ
« ը՛զ Քս. քա՛րեքա՛նե յա՛ցե՛ք »:

Ինչպէս սոյն օրինակին մէջ կը տեսնուի, երկու զարկի տեւողութիւն ունին այն վանկերը որոնց վրայ դրուած է խոս-մովային (՝) ինչպէս նաև քուր (՝) պա-րոյկ (՝) իրորակ (°) և վերնախանդ (՝) (1) նշանները (խաղ): Իսկ այն վանկերը որոնց վրայ դրուած է՝ շեշտ (') քուր (') փուշ (՝) նշանները, անոնք ալ մէկ զարկի տեւողութիւն ունին, ինչպէս նաև մէկ զարկի տեւողութիւն ունին վրանին բնաւ որ և է նշան չգրուած վանկերը (2):

Օրինակ՝ խաղերու, երգելու կերպնը-շաններ ևս բլաւուն: Շարական Մենդեան Գ. աւուր օրհնութեան Բ. պատկերի Ա. տան. զկ.

[1] Շարականի մէջ տեսնուած սոյն վերնախանդ նշանը չայ. ձայնագրութեան մէջ կը գործածուի [՝] սոյն ձևով զի անուամբ [արագ]:

[2] Իւրաքանչիւր զարկ մէկ երկուստի համարմէ պէտք է նկատել՝ միշտ չափով երգեցողութեամբ:

«Ո՛ր ըզ՝ մա՛րմնացեալն տօ՛ւսարս Ի յո՛ւ
«րո՛վա՛յնի տո՛ւմ կրե՛ցե՛ր ուրա ~ ~ ~ ~ ~»

Ճ Ճ Ք խ լե՛ր ա՛նհա՛րսն ա՛ցեալ ընայ՝ր» :

Սոյն օրինակին մէջ եւս տեսնուելով
մէկտեղ թէ իրենց վրայ շեշտ, բութ, փռշ
(ձեւերը տես վերը) նշանները կրող վան-
կերը (իրենց վրայ բնաւ նշան չկրող վան-
կերն ալ) մէկ զարկի տեւողութիւն ունին,
ինչպէս նաեւ իրենց վրայ խտրութիւն () և
ոչորակ (°) նշանները (խազ) կրող վանկերն
ալ երկու զարկի տեւողութիւն ունին, կը
տեսնուի նաեւ թէ (•) առջ նշանն ալ որ
տօւսարս բառին Ա. և Բ. վանկին մէջտե-
ղը դրուած է, երկու վանկերը միացնելով
մէկ վանկի մը վերածելու և ըստ այնմ
երգել տալու պաշտօնն ունի. որով և եր-
գելու կերպին մէջ տարբեր ձեւ մը ներ-
մուծուած կ'ըլլայ, այսպէս է նաեւ ուրախ
բառին հնչման ձեւը երգեցողութեան պա-
հուն, որ կ'ըլլայ . փոխանակ ուրախ՝ ուրա-
ռախ որ 14 զարկի տեւողութիւն ունի,
իր մէջ («բ» և «խ» գրին մէջ) գտնուած
խտրութիւն, զոյգ բութ, բութ, փաթութ,
հոռնայ և պարոյկ խազերուն (1) պատճառաւ .
բայց որովհետեւ ճիշդ՝ խազերու տեւողու-
թեան չափով՝ երգելը երկար կը տեւէ և
այսու թերեւս ախորժալուր չթուիականչ-
ներու, ուստի համառօտելով 4 և մինչև 2
զարկի իսկ տեւողութեամբ կրնայ երգուիլ :
Ինչպէս կը տեսնուի, այս օրինակին մէջ
ալ խազերը կամ անոնցմէ ոմանք երգելու
կերպի նշաններ ևս են եղեր, առանց սա-
կայն բան մը կորսնցնելու՝ իրենց՝ չափի
տեւողութեան նշաններ ևս ըլլալու յատ-
կութենէն :

Այսպէս են նաեւ (∞) խուն և (≈)
խում — որ կրկնախազ ևս կ'ըսուի — խա-
զերը որոնք իրենց ներքեւ գտնուած վան-
կերուն՝ երգելու կերպին մէջ իրենց յա-
տուկ տարբեր ձեւը կուտան . ասոնց պէս
կան նաեւ ուրիշ խազեր ալ :

Մէջ բերուած սոյն երկու օրինակներով

[1] Սոյն խազերուն միացեալ ձեւը տես վերը :

մանաւանդ կարծեմ հնարաւորութեան չա-
փով կարողացանք բացատրել մեր գաղա-
փարը, որ արդիւնքն է համեստ կարողու-
թեան մը ներած սահմանին մէջ մեր ու-
նեցած ուսումնասիրութեան եզրակացու-
թեան . մենք՝ ասով այս մասին վերջին
խօսքն ըսած ըլլալու յաւակնութիւնն ու-
նեցած ըլլալ չենք ուզեր, այլ կը փափա-
քինք որ ուրիշներ ալ, որոնք աւելի մի-
ջոցներ ունեցած են ուսումնասիրելու սոյն
խնդիրը, նոր և աւելի լուսաբանութիւն-
ներով՝ ճշգրիտ և վերջնական եզրակացու-
թեան մը յանգին անոր լուծումի մասին :

Այս առթիւ չեմ կրնար մոռնալ յիշելու
Սուրբ Էջմիածնի յայտնի երաժշտագէտ
հոգեշնորհ Տ. Կոմիտաս Վարդապետը, ո-
րուն չարականի խազերու մասին ունե-
ցած ուսումնասիրութիւնը, ինչպէս նաեւ
երաժշտական հմտութիւնը ամէնուն ծա-
նօթ է . մանաւանդ որ վերջերս թերթերէ
ոմանք գրեցին իսկ թէ այդ մասին հրա-
պարակային լուսաբանութիւններ պիտի
տայ . մենք իբրեւ հետեւող մը երաժշտու-
թեան և սիրող մը մանաւանդ մեր եկե-
ղեցական գոհար երաժշտութիւնը և փա-
փաքող մը անոր ալ աւելի կանոնաւորու-
մին և արդիւնաւորումին, խոնարհարար
հրապարակաւ կուգամ խնդրել իր Ս. Հայ-
րութենէն որպէսզի բարեհաճի թէ՛ չա-
րականի խազերու մասին և թէ՛ մեր եկե-
ղեցական երաժշտութեան և երգեցողու-
թեան մասին իր տեսութիւնները պարզել
Տաճար կրօնաթերթի էջերում, որով ոչ
միայն մեզ, այլ և բոլոր երաժշտասէրները
և մանաւանդ մեր եկեղեցական երաժշ-
տութեան կանոնաւորումին և բարելա-
ւումին փափաքողներն անհունս գոհ ձգած
պիտի ըլլայ :

Երանի՛ թէ իմ սոյն գրութիւնս, սոյն
խնդրոյն լուծումի մասին լուսաբանու-
թիւններ յառաջ բերելու գրգիռ մը եղած
ըլլար, որպէս զի փափաքուած եղբակա-
ցութեան կարենայինք յանգիլ, և ահա
այդ իսկ պիտի ըլլար իմ ալ փափաքիս
կատարումը, որ պիտի պատճառէ նաեւ
ներքին ամենամեծ գոհունակութիւն մը :

ԱՐՐԱՀԱՄ ՔՀՆՑ. ԷՊԷՆԱՆ

Ք Ա Տ Ե Ր Ա Կ Ա Ն

Ս. ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ
ԿԱՄ

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՐՈՒՄԸ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ (*)

Մէկ նախեղանով, վեց արարուածով եւ մէկ
վերջաբանով.

Գ Ր Ե Ց

ԳԱՐԵԳԻՆ Վ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

(Ի Դպրեվանոց)

(Շարունակութիւն Ե. թիւին)

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾ

ՏԵՍԻԼ Գ.

Նոյնք եւ Մանկլաւիկ

(Շտապով ներս մտնելով եւ թուղթ մը ներկայա-
ցրնելով Արսաւեւի).

Արսաւեւ

Ի՞նչ է այդ, ո՞վ բերաւ այս թուղթը:

Մանկլաւիկ

(Շուտաւ ահմարկ մը նետելով Գիւսի վայ)

Նա՛... ինքը...

Արսաւեւ

(Որ ահապարանով բացած էր թուղթը եւ տը-
գունած)

Հա՛, այո՛, հասկցայ, հի՛մակ, թող ըս-
պասէ:

Գիւս

(Վարանոց)

Պէ՛տք է որ մինակ թողու՞մ զՁեզ:

Արսաւեւ

(Տատախոս)

Ը՛հ, ո՛չ, կրնաք մնալ. միայն վայր-
կեան մը ներողութիւն, հի՛մակ կուզամ:

(Դուրս կ'ելլէ ահապարանով)

ՏԵՍԻԼ Գ.

Գիւս

(Առանձին)

(Ոտի ելլելով եւ գողունի մտիկ քնելով դռնէն)

Ա՛հ, Դրողը տանի, ո՛չինչ չեմ լսեր,
բայց հասկնալի է, նա՛ է, ինքը, տարա-
կոյս չի՛լայ... և խորհիլ թէ Հայոց թա-

(*) Ամէն իրաւունք հեղինակին վերապահուած է:

թագաւորն է որ... կը դարպասէ անոր
... և ըսել թէ Վասակ իրաւունք չունի.
վատ հրամանք է կապեր Աստուած Ար-
տաշէսի ճակտին...

Բայց Արտաշէս ուշացաւ...

(Գարձեալ կը մտնայ դուռին եւ ականջ կը դնէ)

Ո՛չինչ, ձայն չիկայ:

(Հազալու ձայն մը կուգայ դուռէն)

Նոյն ինքն է...

(Ոտնաձայն մը)

Կուգայ:

(Կը նստի իբր թէ մտախոն)

ՏԵՍԻԼ Ե.

Արսաւեւ եւ Գիւս

Արսաւեւ

[Ներս մտնելով ո՛չ զուարթ եւ ո՛չ տխուր]

Ի՞նչ կը մտածէք, նախարար:

Գիւս

[Ընդուն]

Ա՛հ, ներողութիւն, ո՛չինչ... միայն
Ձեր հարցումով կ'զրադէի:

Արսաւեւ

[Նստելով]

Հա՛, այո՛, հի՛մակ ըսէք տեսնենք, կար-
ծեմ Վասակի վրայ կը խօսէինք. ի՞նչ կը
ըսէք անոր մասին:

Գիւս

Անոր մօտէն կուզամ, Տէր արքայ:

Արսաւեւ

[Կասկածոց շեշտով մը]

Անոր մօտէն:

Գիւս

Այո՛. նա իր մօտ հրաւիրած էր իրեն
համախոհ նախարարներէն ոմանք:

Արսաւեւ

[Հեզոն ժպիտով մը]

Ուրեմն Դո՛ւք ալ անոր համախոհե-
րէն էք:

Գիւս

Առ երես:

Արսաւեւ

Հը՛ հը՛. և ի՞նչ պէտք ունիք բարեկա-
մութիւն կեղծելու անոր:

Գիւս

Ատիկա կարեւոր է՝ անոր սրամաղբու-
թիւնները չօգտիւնու և նախադրուշացնե-
լու համար իմ Տէրը:

Արսաւես

Ուրիշ ո՞րոնք ներկայ էին :

Գիւհ

Ձեզ ծանօթ են արդէն Վասակի բոլոր արքանեակները, որոնց մէջ է նաեւ Արծ-կէացի երէցը. նա բաւական մեծ դեր կա-րող է խաղալ :

Արսաւես

Այո՛, լաւ ածարարաւ մ'է նա. ես զանի աղէկ կը ճանչնամ. նոյն իսկ օր մը պա-լատէս դուրս վաճառեցի զինքը, երբ լրբա-րար զրպարտութիւններ կը փորձէր յերիւ-րեւ հայրապետի մասին՝ ներկայացնելով զանի իմ թշնամիս :

Գիւհ

Օ՛, ուրեմն ա՛յդ է եղեր պատճառը՝ որ նա մասնաւոր զրգուումով կը խօսէր Ձեր անձին դէմ, իբր թէ Դուք չէք կրցեր դը-նահատել իր ծառայութիւնները եւ :

Արսաւես

Ես այդպիսի մարդոցմէ ոչ մէկ ծա-ռայութիւն չեմ սպասեր. մարդիկ որոնց սեւեռամտածումն է Արշակունի գահուն բարձումը :

ՏԵՍԻԻ Զ.

Նոյնք եւ Մանկլաւիկ

Մանկլաւիկ մը

[Ներս մտնելով]

Տէր արքայ, Հայրապետը եկաւ քանի մը հետեւորդներով :

Արսաւես

[Ոտի ելլելով Գիւհի հետ]

Շուտո՞վ, վե՛ր հրամայուր :

[Մանկլաւիկը կը մեկնի]

Գիւհ

[Շփոթած երեւոյթ մ'առնելով]

Պէ՛տք է որ ես ալ հոս մնամ :

Արսաւես

Եւ անհրաժեշտ իսկ :

[Անդամը կ'առնէ ուսերուն վրայ. Գիւհ կը յար-դարէ զայն]

ՏԵՍԵԼ Է.

Նոյնք, Սահակ, Նիքի եւ Վարդան

Սահակ

[Ներս կը մտնէ իր հետեւորդներով խիստ զգած-

ուած եւ խուր դէմով. Արսաւես եւ Գիւհ դուռ-նէն կ'ընդունին զինքը յարգալից] :

Ողջո՞յն, արքայդ Հայոց :

Արսաւես

Օրհնեցէ՛ք, Սրբազան Հայրապետ, հը-րամայեցէ՛ք :

Սահակ

[Գիւհի դուռնալով]

Օ՛, Դուք ալ հոս էք, լա՛ւ, լա՛ւ :

Գիւհ

Բարեբախտ իմ, Սրբազան Տէր :

[Կը նստի]

Արսաւես

Յոգնած կ'երեւիք քիչ մը :

Սահակ

Մերերը հակամէտ են շուտով յոգնելու : Կը յուսամ թէ հանգիստ էք :

Արսաւես

Ձեր սուրբ աղօթքներուն կարօտ :

Սահակ

Եւ Դուք, Վահեւոռնեայ Տէր. ուրախ եմ զՁեզ հոս տեսնելուս :

Գիւհ

Շնորհակալ եմ : Թէեւ կը փափաքիմ անձամբ յաճախակի այցելել Ձեզ, բայց դժբախտաբար զբաղումներս արգելք կ'ըլ-լան : Վստահ եմ Ձեր ներողամտութեան վրայ :

Սահակ

Զբաղումը ամէն բանէ գերադանց է, երբ սրբազան գործի մը յատկացուած է այն : Կը սիրեմ հաւատալ թէ Ձերինը այդպիսիներէն է :

Գիւհ

Կրնաք վստահ ըլլալ : Մեզի համար գե-րադանց շահը Հայրենիքի փառքն է՝ որուն նուիրուած է մեր կեանքը :

Սահակ

Օրհնեա՛լ ըլլան ամէն անոնք՝ որոնք ո՛չ միայն կը խորհին՝ այլ նաեւ կը գոր-ծեն ա՛յտպէս :

Վարդան

Կ'երեւի նախարարներու ժողովէն դար-ձած էք, Վահեւոռնեայ Տէր :

ԳիւՍ

Այո՛ . սակայն զժբաղդաբար թէ բարե-
բախտաբար Մամիկոնեաններէն ներկայա-
ցուցիչ չիկար հոն :

Արսաւես

[ԳիւՍի]

Հրաւիրուած չէ՞ր Մամիկոնեանց Տէր՝
Վարդանը :

ԳիւՍ

Անպատճա՛ռ . թէեւ լաւ չեմ գիտեր :

Վարդան

[Արսաւեսի]

Ինչպէս ըսաւ նախարարը , բարեբախտա-
բար չգտնուեցայ այդ ժողովրդին մէջ՝
Մամիկոնեանները , Տէր արքայ , դեռ ի-
րենց արիւնը պղտորած չեն , եւ չեն կրնար
արատաւորել իրենց պատիւը , մասնակ-
ցելով ժողովի մը՝ որ հայրենամլեաս դաւի
մը ծրագրերը կը խմբագրէ :

ԳիւՍ

[Այլափոխուած]

Ի՞նչ կ'ըսէք , քաջդ Մամիկոն , զի՞ս ալ
վիրաւորել կ'ուզէք . իմ մասնակցութիւնս
լոկ դիւանագիտական է : Իմ անկեղծ վե-
րաբերումս Արշակունի գահին հանդէպ՝
արեւու պէս պայծառ ճշմարտութիւն մ'է :

Վարդան

[Գլուխը մէկ կողմ դարձնելով եւ հագիւ լսելի
նայելով]

Թերեւս . . .

ԳիւՍ

Վասակի խիստ արմատական եւ վտան-
գաւոր պապափառներուն հետ բացարձակա-
պէս սնհաշտ եմ ես : Ես միշտ ջանացած
եմ հակադրել անոնց՝ աւելի խոհեմ , արա-
մաբանական եւ Հայքենիքի օգուտը դիտող
առարկութիւններով : Եւ կարծիքի փո-
խանակութիւններու միջոցին բախում-
ներ անպակաս են իմ եւ անոր միջեւ : Վա-
սակ շատ կը սխալի թագաւորին անձին
դէմ դաւադրելով ուղղակի :

Վարդան

[Հեզմախառն]

Է՛հ , աւելի գերադաս չէ՞ անկեղծ թըշ-
նամութիւնը կեղծաւոր բարեկամութե-

նէն : Քանիտէ՛ր կան՝ որոնք մութին մէջ
կը գործեն , իսկ նա յայտնի :

(Զայրացիոս)

Բայց Սիւնեաց նախարարութիւնը եր-
բեք պիտի չկրնայ ձեռք բերել իր երազածը :

ԳիւՍ

(Վիրաւորանքէն դէմքը մուլած)

Ի՞նչ կը կարծէք որ երազէ Վասակ :

Վարդան

Եւ դուք չէ՞ք գիտեր :

ԳիւՍ

Ես գիտեմ թէ թագաւորին անկումին
կը բաղձայ նա , եւ ա՛յսչափ միայն :

Վարդան

Եւ ա՛յսչափ միայն :

ԳիւՍ

Պէտք չունիմ ստելաւ կամ կեղծելու :

Վարդան

Եւ ինչո՞ւ կը բաղձայ անոր անկումին :

ԳիւՍ

Փափկանկատութիւնը չներեր որ ամէն
ինչ հրապարակեմ հոս :

Արսաւես

Ո՛չ , նախարար , ես կ'արածնեմ ամէն
ինչ յայտնապէս խօսելու :

ՏԵՍԻԼ Բ.

Նոյնք եւ Սմբատ

(Սմբատ ներս կը մտնէ բոլորովին յոգնած եւ Բե-
նաթոք , կը բարեւէ ներկաներն ըստ պատահի եւ
կը նստի)

Վարդան

(Հեզմակամ)

Նախարարներու ժողովէն , հէ՞ , ասպետ :

Սմբատ

(Շնչառալու)

Այո՛ , սպարապետի հետ . . .

Արսաւես

(Ապշած)

Վարդանը՞

Սմբատ

(Բեմիծաղով)

Այո՛ , Վարդանի՞ որուն հետ հայրապե-
տանոցը կը գտնուէի այդ ժողովի ատեն . . .

մնաք պիտի փախաքէինք ազնիւ նախարարէն (Գիւսը մասնացոյց քնելով) տեղեկութիւններ առնել այդ մասին :

Արսաշես

Արդէն նախարարը պիտի խօսէր՝ և Դուք վրայ հասաք : Ըսէք , Վահեւունի , թէ ինչո՞ւ Վասակ կը բաղձայ իմ անկումին :

Գիւս

Տէր արքայ , Դուք արդէն գիտէք թէ ի՞նչ բանի համար կ'ամբաստանուիք , ինչպէս նաև Մամիկոնեանը և սուպետ :

Վարդան

Այո՛ , ես քաջ գիտեմ այն ամէնը՝ որ խորհրդակցութեան նիւթ եղաւ նախարարական ժողովին մէջ . չարածողով մը իսկապէս , ուր Հայրենիքի քայքայումը կը նիւթեն Վասակ և իւրայինները :

Սմբատ

Վահեւունեաց Տէր , ի զո՞ւր կը ջանաք քողարկել՝ ինչ որ յայտնի իրողութիւններ են այսօր մեզ համար : Ձեր ընթացքը քիչ մը կասկածելի կ'ընէ Ձեր բարեմտութիւնը : Հայոց ծերունի սապետը (մօռալը քոնեքով) ամէն ինչ գիտէ և կը ճանչնայ բոլոր նախարարները իրենց իսկապէս կարողութիւնը : Վասակ երկրորդ Մեհրուժան մ'է . . . բայց , թող յիշէ՛ յաւակնոտ Արծրունիին վախճանը , թող յիշէ՛ Սմբատը՝ որ դեռ ողջ է . հոգ չէ թէ նա ծերացած է , առիւծը միշտ առիւծ է :

Վարդան

Մերացած առիւծին քով կորիւններ ալ չեն պակսիր , Տէր սուպետ :

Սահակ

Զգուշանալո՞ւ է սակայն ազուէսներէն՝ որոնց խորամանկութիւնը յաճախ առիւծներու զօրութիւնը կը ջլատէ :

Յղիճէ

Առիւծ քաջութիւնով և ազուէս իմացականութիւնով . ա՛յս է հիմակ պահանջի յատկութիւնը ամէն անոնցմէ՝ որոնք հայրենիքի ընտանի թշնամիներուն դէմ կը զսնեն ինքզինքնին : Ասպետ առիւծ — ազուէս մ'է , սպարապետ անոր արժանա-

ւոր յաջորդը : Հեռեւարար Ձեր Սրբութիւնը թող չվախնայ միայն ազուէսներէն՝ զորս դժուար չէ ծուղակին մէջ ձգել :

Սահակ

Սիրելիներ , ձգեցէ՛ք պահ մը խանդավառական խօսակցութիւնները , բուն վէրքը չօշափենք :

Ինծի համար զմեզ զբաղեցնող խնդրին էական կէտը այն չէ թէ այս կամ այն կ'ամբաստանեն թաղաւորը , այլ թէ՛ իբրեւ ի՞նչ կ'ամբաստանեն զսնի , հիմնաւոր է ամբաստանութիւնը թէ ո՛չ , մէկ կամ միւս պարագային ի՞նչ խոհական եւ լուրջ միջոց կարելի եւ պէտք է ձեռք առնել :

Սմբատ

Յայտնի՞ է թէ նախարարական ժողովին մէջ ի՞նչ կէտերու շուրջ դարձած են խօսակցութիւնները :

Գիւս

Քանի որ թագաւորը արտօնեց , կրնամ յայտնապէս յայտարարել հոս թէ թագաւոր Արտաշէսի բարոյականն է որ միշտ խմբածափ առարկայ կ'ըլլայ :

Արսաշես

Զարմանալի՛ , եւ ուրիշ ո՞չ ինչ :

Գիւս

Գէթ ես ա՛յսքանը գիտեմ :

Սահակ

Սիրելիս , արքայ Արտաշէս , խիղճերնիդ ալ կը վկայէ կարծեմ թէ այս ամբաստանութիւնը ո՛րքան անպատուաբեր Ձեր դիրքին՝ ա՛յնքան ալ հիմնաւոր է :

ԱՐՏՈՆԱՏԵՐ

ՀԻՄԱՅԵԱԿ ԴԷ. ԷԴՍԻՐՃԵԱՆ

ՎԱՐԻՁ.— ՂԵՒՈՆԴ Ծ.Վ. ԳՈՒՐԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱՊԵՏ.— ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

ՑԱՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Օսմանեան Գործակցական Ընկերութեան
Պատր Ալի հասէտի Սեփեքնիլէր փողոց Թիւ 27

Մարտիկա
Մօսկուա
Նիկոմիդիա
Նիւ-Եօք
Նոր Զուղա
Շ. Գարանիսար
Ուսաֆ
Պանսում-Պարֆետեր
Պաղսաւս
Պաժրա
Պարսիկա
Պէրուք
Պուրե
Պուսա
Ռուսոֆ
Ռոսոքո
Սամսոն
Սեբասիա
Սելանիկ
Սիւրբիսար
Սօֆիա
Տարսանի
Տեսե աղան
Տիարպէֆր
Տրապիզոն
Տփլիս
Վառնա
Փարիզ
Քեօքանիա
Քեօքեքնե
Քղի
Ֆիլիպէ
Ֆրէզնօ

Հոգեւոր Տեսուչ Տ. Եղիշէ Բնյ. Դալչինեան
Տ. Պօպօնեան Բնյ.
Տ. Ոսկի Բնյ. Պիպիեան
Տօքթ. Թիւրեքեան Խան
Առաջն. Փոխանորդ Տ. Բագարատ Վրդ. Վարդազարեան
Դաւանիկ էֆ. Պէլլէրեան
Կարապետ էֆ. Բենեանեան
Առաջնորդ Տ. Կարապետ Ծ. Վրդ. Մաղլումեան
« Տ. Մուսէս Ս. Եպիսկ. Կէօմրիւքեան
Աւետիս էֆ. Բէրբէնեան
Յովաննէս էֆ. Տ. Կարապետեան
Հոգեւոր Տեսուչ Տ. Եղեկիէլ Վրդ.
Ղազարոս էֆ. Կոնիկեան
Առաջնորդ Տ. Յովաննէս Ս. Եպիսկ. Արշարունի
Տ. Մկրտիչ Բնյ. Մըշիկեան
Առաջն. Փոխանորդ Տ. Բարթող Բնյ. Թաքմեան
Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վրդ. Օտապաշեան
« Տ. Թորգոմ Ծ. Վրդ. Գուշակեան
Հոգեւոր Տեսուչ Տ. Սերոփէ Բնյ. Ներշապուհ
Տ. Յովաննէս քնյ. Բըշրեան
Տ. Մկրտաչ Բնյ. Տ. Մեսրոպեան
Տ. Դիմիսիոս քնյ. Տրէզնեան
Դարեգին Բնյ. Տէօլլէթեան
Առաջնորդ Տ. Զաւէն Վրդ. Տ. Եղիսեան
« Տ. Էմմանուէլ Վրդ. Պալեան
Հ. Առաքիւհան
Աւետիս էֆ. Զարպանէլեան
Հոգեւոր Տեսուչ Տ. Վառնապուհ Բնյ. Բիպարեան
Առաջն. Փոխանորդ Տ. Մեսրոպ Բնյ. Տէօքմէնեան
Տ. Մատթէոս քնյ. Մանիկեան
Առաջն. Տեղապահ Տ. Պսակ Վրդ.
Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
Ազն. Յակոբ էֆ. Նչկեան

Պալատի մէջ բերքիս վաճառման կեդրոնացեղին է՝

ՕՍՄԱՆԵԱՆ ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

Պապը Ալի հասսէսի, Սեփեքնիլեր փողոց, Թիւ 27, եւ ֆինանսերը եօզուուի,
Պազըրբըլար՝ Արմենակ Եղբրեան եւ Ընկ. գրասուցը, իսկ Բերայի մէջ, Մեծ-
Փողոց, Սըլանիսի դէմ ծխավաճառ Գ. Կիլիբեանի խանութը:

ԽՄԱՐԱԳՐԿԱՆ ՄԱՐՄԻՆ

- 1⁰ Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմքեաթեան
- 2⁰ Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
- 3⁰ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
- 4⁰ Տ. Դարեգին Վրդ. Խաչատուրեան
(Խմբագրապէս)
- 5⁰ Տ. Պարզե Վրդ. Դանիէլեան
- 6⁰ Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
- 7⁰ Տ. Արիստակէս Բնյ. Հիսարեան
- 8⁰ Տ. Զարմայր Բնյ. Կէղիւրեան
(Օգ. Խմբագրապէս)

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

- 1⁰ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
(Վարիչ)
- 2⁰ Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
(Արտոգրատ)
- 3⁰ Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
- 4⁰ Տ. Սուքիաս Բնյ. Պալլաճեան
(Գանձապէս)
- 5⁰ Տ. Պօղոս Բնյ. Պէյազճեան
(Ասեմաղապիւր)
- 6⁰ Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
(Ասեմաղապէս)
- 7⁰ Տ. Գէորգ Բնյ. Անանեան
- 8⁰ Տ. Դրիգոր Բնյ. Ճէպէճեան

«ՏԱՃԱՐ»-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դուրս
Գաւառաց » »	40 »
Արսասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	50 փարայ

«Տաճար»-ի վերաբերեալ վարչական գործերու համար պէժք է դիմել
ՂԵՒՈՂԻ Խ. Վ. ԴՈՒՐԵՍԱՆ Ի

Իսկ խմբագրական գործերու համար պէժք է դիմել խմբագրապետ
ԴՍԻՐԵԴԻՆ Վ. ԽԱՉԱՏՈՒՐԵՍԱՆ Ի

ارمنيجه «داجار» غزتهسى اداره خانهسى
باب على جادهسى ابوالسعود زوقاغى نومرو ۲۷

Rédaction de la Revue «DADJAR».
27, Rue Sépétdjiler, Av. de la S. Porte, Constantinople. (Turquie).

Խմբագրութիւն «ՏԱՃԱՐ» Կրօնա-եկեղեցական կիսամսեայ հանդէսի
Պապը Ալի ճատտէսի Սէփէթճիլէր փողոց թիւ 27

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ՀՄԱՅՆԱԿ ԳՍ.ՀԱՆԱՅ ԷԴՍԷՐՃԵԱՆ